2009, ՀՈՒԼԻՍ Բ, ԹԻՎ 14 (298)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԽՈՍՔԸ ԹԵՀՐԱՆ-ԵՐԵՎԱՆ ՉՎԵՐԹԻ ԱՂԵՏԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

*Խոր ցավով տեղեկացանք Թեհրան-Երեւան չվերթն իրականացնող օդանավի կործանման եւ դրա հետեւանքով բազմաթիվ մարդկային զոհերի մասին:*

*Ողբերգական այս իրադարձությունը մեծ վիշտ ու տխրություն բերեց ամենքիս: Սգում ենք աղետից զոհվածների կորուստը համայն մեր ժողովրդի հետ:*

*Հանուն Գերագույն հոգեւոր խորհրդի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության՝ Մեր սրտակցությունն ու ցավակցությունն ենք բերում զոհվածների բոլոր հարազատներին ու մերձավորներին:*

*Աղոթում ենք, որ Բարձրյալն Աստված մխիթարի եւ զորացնի վշտաբեկ ու սգակիր սրտերը՝ հաղթահարելու կորստի ցավը, եւ Իր անբավ ողորմությանն արժանացնի հոգիները հանգուցյալների:*



### Հոգեհանգիստ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Հուլիսի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ Թեհրան-Երեւան չվերթի վթարի հետեւանքով զոհվածների հոգիների խաղաղության համար:

Ներկաներին իր ցավակցական խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետը.

*«Խոր վշտով են համակված մեր հոգիները: Թեհրան-Երեւան օդանավի չարաբաստիկ աղետը մարդկային շատ կյանքեր խլեց: Ցավ է մեզ, որ բազմաթիվ մարդկանց երկրավոր կյանքի ընթացքը ավարտվեց ողբերգական իրադարձությամբ: Այսպիսի դժվարին պահերին եւս մենք մեր աղոթքներն ենք բարձրացնում առ Աստված, ինչպես ասում է սաղմոսերգուն. «Զնեղութիւն եւ զանձկութիւն գտի եւ զանուն Տեառն կարդացի» (Սաղմ. ՃԺԴ 3-4):*

*Հայցում ենք, որ Բարձրյալ Տերը մխիթարի մեզ ցավի եւ տրտմության մեջ, զորակից լինի՝ հաղթահարելու անդառնալի կորստի կսկիծը»:*

Հայոց Հայրապետը նաեւ իր ցավակցությունն ու սրտակցությունը հայտնեց զոհվածների բոլոր հարազատներին, Իրանի եւ Վրաստանի իշխանություններին ու ժողովուրդներին՝ աղոթելով, որ Տերը խաղաղության մեջ հանգստություն եւ երանություն պարգեւի հանգուցյալների հոգիներին եւ Սուրբ Հոգու շնորհներով մխիթարի ու սփոփի սգակիր բոլոր սրտերը:

Հոգեհանգստին մասնակցում էին ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, կառավարության անդամներ, ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Սեյեդ Ալի Սաղայանը, Մայր Աթոռի միաբաններ, զոհվածների հարազատներ:

## Օծվեց Արմաղանի Ս. Հարություն մատուռը



Հուլիսի 18-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ օծվեց Գեղարքունիքի մարզի Արմաղանի Ս. Հարություն մատուռը, որի բարերարն է տաշքենդաբնակ Ռադիկ Մխիթարյանը: Այն կառուցվել է Ռաֆիկ Հերգընյանի նախագծով:

Արարողության ավարտին Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքը հայտնեց մատրան բարերարին եւ կառուցմանը նպաստած բոլոր մարդկանց: Հայոց Հայրապետն ուրախությամբ արձանագրեց, որ մատուռն օծվում է Տիրոջ Պայծառակերպության տոնի նախաշեմին՝ հույս հայտնելով, որ այն պիտի դառնա մի Թաբոր լեռ, որից պիտի Տիրոջ լույսը եւ օրհնությունը ճառագեն մարդկանց սրտերում եւ հոգիներում:



Այնուհետեւ Հայոց Հայրապետը, ընդառաջելով Գեղարքունյաց թեմի առաջնորդ Մարկոս եպս Հովհաննիսյանի խնդրանքին եւ բարձր գնահատելով Ռադիկ Մխիթարյանի ծառայություններն ու վաստակը, վերջինիս կուրծքը զարդարեց Հայոց Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանով:

Մատրան օծմանը ներկա էին ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանը, պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Սահակ եպս Մաշալյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ, մարզային եւ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ:

## Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերադարձավ Մայր Աթոռ Սբ Էջմիածին



Հուլիսի 16-ի երեկոյան Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ավարտելով պաշտոնական այցը Մոսկվա, վերադարձավ Մայր Աթոռ Սբ Էջմիածին:

Այցի ընթացքում Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Ա Պատրիարքի հետ եւ իր շնորհավորանքներն ու բարեմաղթանքները փոխանցեց Ռուս Ուղղափառ Եկեղեցու նորընտիր գահակալին:

*«Ձերդ Սրբություն, եկել ենք վերամբագրելու եղբայրական սիրո եւ բարեկամության այն ուխտը, որ համատեղ աղոթքով, աշխատանքով եւ միմյանց զորակցությամբ կնքել են մեր նախորդ Հայրապետները եւ մեր ժողովուրդները, եւ որը հիմն է մեր երկու Եկեղեցիների համագործակցության»*,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ բարձր գնահատելով նաեւ Ռուս Եկեղեցու եւ իշխանությունների աջակցությունը ռուսահայ համայնքին եւ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմին:

Ամենայն Հայոց Հայրապետի եւ Ռուսիո Պատրիարքի հանդիպման ընթացքում քննարկվեցին նաեւ երկու Եկեղեցիներին հուզող հարցեր, անդրադարձ եղավ նաեւ ԼՂ խաղաղ կարգավորման խնդրին: Որոշվեց Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Ա Պատրիարքի միջնորդությամբ շարունակել մոսկովյան եռակողմ հանդիպումները՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցու, Հայ Առաքելական Եկեղեցու եւ Ադրբեջանի մուսուլմանների հոգեւոր պետերի միջեւ:

# Քահանայական ձեռնադրություն Երեւանի Սբ Գր. Լուսավորիչ Մայր եկեղեցում

Հուլիսի 19-ին Հայ Առաքելական Եկեղեցին մեծ շուքով տոնախմբեց մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնը, որի առիթով, բարձր նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց պատարագ: Սրբազան արարողության ընթացքում, ձեռամբ ԱՄՆ հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանի, քահանայական ձեռնադրություն եւ օծում ստացավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 27 միաբան սարկավագ: Հայոց Եկեղեցու այս կարեւոր իրադարձությանը մասնակցում էր նաեւ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը: Խաժակ սրբազանը սուրբ մյուռոնով օծեց նրանց ճակատներն ու ձեռքերը՝ շնորհելով հոգեւոր նոր անուններ: Խորեն սրկ. Մանուկյանը վերակոչվեց Մովսես քահանա, Սարգիս սրկ. Այվազյանը՝ Սարգիս քահանա, Սահակ սրկ. Սահակյանը՝ Դավիթ քահանա, Նոյ սրկ. Նազարյանը՝ Շահե քահանա, Հակոբ սրկ. Գեւորգյանը՝ Անդրանիկ քահանա, Վահագն սրկ. Իգնաթեւոսյանը՝ Ստեփանոս քահանա, Արսեն սրկ. Հարությունյանը՝ Ներսես քահանա, Հրաչյա սրկ. Սահակյանը՝ Գալուստ քահանա, Արտակ սրկ. Ստեփանյանը՝ Բաբկեն քահանա, Ռուստամ սրկ. Պետրոսյանը՝ Հարություն քահանա, Արթուր սրկ. Մխիթարյանը՝ Տիգրան քահանա, Սարգիս սրկ. Քեսաբլյանը՝ Հովհաննես քահանա, Էդուարդ սրկ. Սահակյանը՝ Հայկ քահանա, Խաչատուր սրկ. Գյոզալյանը՝ Վարդ քահանա, Սմբատ սրկ. Վարդազարյանը՝ Առաքել քահանա, Միքայել սրկ. Բարսեղյանը՝ Թադեոս քահանա, Ավետիք սրկ. Հովհաննիսյանը՝ Նիկողոս քահանա, Աշոտ սրկ. Միրզոյանը՝ Գեւորգ քահանա, Արմեն սրկ. Խաչատրյանը՝ Եղիա քահանա, Էդգար սրկ. Հովհաննիսյանը՝ Լեւոն քահանա, Հայկ սրկ. Մկրտչյանը՝ Վաչե քահանա, Հովհաննես սրկ. Ազնավուրյանը՝ Սեդրակ քահանա, Թաթուլ սրկ. Համբարձումյանը՝ Գարեգին քահանա, Նորայր սրկ. Սահակյանը՝ Հակոբ քահանա, Նորայր սրկ. Ղարիբյանը՝ Սահակ քահանա, Արմեն սրկ. Հմայակյանը՝ Նշան քահանա, Նարեկ սրկ. Վարդանյանը՝ Պողոս քահանա:

Այնուհետեւ ձեռնադրող սրբազան հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ շեշտելով, որ այսօր Հայ Առաքելական Եկեղեցին ցնծության եւ բերկրանքի մեջ է, քանզի 27 նոր հոգեւորական համալրեց Հայոց Եկեղեցու անդաստանը: Իր ոգեշունչ քարոզում Խաժակ սրբազանը հորդորեց նորընծա քահանաներին աներեր հավատքով, նվիրվածությամբ եւ նախանձախնդրությամբ ծառայել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ Քրիստոսի կենարար լույսը տարածելով մեր ազգի մեջ, նաեւ պատգամեց, Քրիստոսի Պայծառակերպության տոնի խորհրդի համաձայն, պայծառակերպվել, այլակերպվել եւ իբրեւ նոր մարդ՝ շարունակել իրենց անսակարկ ծառայությունը Հայոց Եկեղեցուն եւ մեր ժողովրդին: Այս ուրախալի առիթով սրբազանը շնորհավորեց նաեւ Հայրապետին եւ հույս հայտնեց, որ Նորին Սրբության օրոք սկսված Հայոց Եկեղեցու վերազարթոնքը դեռ երկար տարիներ պիտի շարունակվի՝ տալով իր քաղցր պտուղները:





Այնուհետեւ Նորին Սրբության առաջնորդությամբ Մայր Աթոռի միաբանները բարձրացան սուրբ խորան՝ համբուրելով քահանաների մյուռոնաբույր ճակատներն ու ձեռքերը: Արարողությանը մասնակցում էր նաեւ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Նույն օրը՝ երեկոյան ժամերգության ընթացքում, կատարվեց նաեւ նորընծա 9 քահաների վեղարի տվչության արարողությունը: Տ. Սարգիս, Տ. Անդրանիկ, Տ. Ներսես, Տ. Եղիա, Տ. Վաչե, Տ. Գարեգին, Տ. Հակոբ, Տ. Նշան եւ Տ. Պողոս կուսակրոն քահանաները վեղար ստացան՝ համալրելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության շարքերը:

# Գումարվեց Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով

Հուլիսի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ գումարվեց Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով:

Ողջունելով ժողովականներին՝ Նորին Սրբությունն իր օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց ներկաներին՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն բերած նախանձախնդիր ծառայության համար: Վեհափառ Հայրապետն իր խոսքում ցավ հայտնեց Մայր Աթոռի երիցագույն միաբան Ներսես արք. Պոզապալյանի մահվան կապակցությամբ եւ հրավիրեց ժողովականներին՝ աղոթելու սրբազան հոր հոգու հանգստության համար: Մինչ օրակարգին անցնելը ԳՀԽ անդամներին ներկայացվեց նախորդ ժողովի արձանագրությունը, ապա ժողովը սկսեց օրակարգի հարցերի քննարկումները:

Եպիսկոպոսաց առաջիկա ժողովի նախապատրաստական աշխատանքների մասին զեկուցեց ԱՄՆ հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը: Քննարկումներից հետո որոշվեց եպիսկոպոսաց ժողով գումարել հաջորդ տարի՝ քննության առնելու Հայ Եկեղեցու հոգեւոր, ծիսական, կանոնական եւ վարչական մի շարք կարեւոր խնդիրներ:

ԳՀԽ-ն անդրադարձավ նաեւ այս տարվա հոկտեմբերի 30-ից մինչեւ նոյեմբերի 4-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հրավիրվող թեմական ներկայացուցչական ժողովի օրակարգին: Որոշվեց թեմական ներկայացուցչական ժողովի հաստատմանը ներկայացնել ԳՀԽ նախորդ նիստում հաստատված Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու թեմական եւ ծխական կանոնադրությունները:

Ժողովն անդրադարձավ նաեւ Հայ Առաքելական Եկեղեցու հոգեւոր քարոզչական գործունեությանը եւ որոշեց հիմնել քարոզչական կենտրոն՝ քարոզչությունն առավել արդյունավետ իրականացնելու համար:

Վեհափառ Հայրապետը ԳՀԽ անդամներին ներկայացրեց Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Ա Պատրիարքի հետ հանդիպման մանրամասները՝ գոհունակությամբ անդրադառնալով երկու Եկեղեցիների միջեւ առկա եղբայրական ջերմ հարաբերություններին: Նորին Սրբությունը տեղեկացրեց, որ այսուհետ եւս պիտի շարունակվի աստվածաբանական երկխոսությունը Հայ Առաքելական Եկեղեցու եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու միջեւ, ինչպես նաեւ, որ Կիրիլ Ա Պատրիարքի միջնորդությամբ շարունակվելու են մոսկովյան եռակողմ հանդիպումները՝ Հայ Առաքելական, Ռուս Ուղղափառ Եկեղեցիների եւ Ադրբեջանի մուսուլմանների առաջնորդի միջեւ՝ ի խնդիր ԼՂ խաղաղ կարգավորման գործընթացի:

Ժողովի ընթացքում քննարկվեցին Արեւմտյան եւ Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակություններին առնչվող կանոնական, կազմակերպչական, ներեկեղեցական խնդիրներ:

# Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Սերբիայի Հանրապետության նախագահին

Հուլիսի 29-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Սերբիայի Հանրապետության նախագահ Բորիս Տադիչին՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԳ նախարար Էդուարդ Նալբանդյանի:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետն անդրադարձավ երկու պետությունների եւ ժողովուրդների միջեւ ստեղծված եղբայրական ջերմ կապերին եւ հույս հայտնեց, որ այս այցից հետո դրանք առավել կզորանան ու կամրապնդվեն՝ ի շահ հայ եւ սերբ ժողովուրդների բարօրության: Նշելով, որ Հայ Առաքելական Եկեղեցին եղբայրական ջերմ հարաբերություններ եւ կապեր ունի Սերբիայի Ուղղափառ Եկեղեցու հետ՝ Նորին Սրբությունն ընդգծեց երկու Եկեղեցիների համագործակցությունը միջեկեղեցական հարաբերություններում:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ Բորիս Տադիչն իր հիացմունքն արտահայտեց հայ մշակույթի եւ քրիստոնեական արժեքների հանդեպ: Խոսելով իր երկրի կյանքում Սերբիայի Ուղղափառ Եկեղեցու կարեւոր դերակատարության մասին՝ Բորիս Տադիչը հույս հայտնեց, որ երկու երկրների հարաբերությունների սերտացմանը զուգընթաց կզորանան ու առավել կամրապնդվեն նաեւ հարաբերությունները երկու Եկեղեցիների միջեւ:

Հանդիպման վերջում Նորին Սրբությունն իր բարեմաղթանքները հայտնեց Սերբիայի նախագահին, եղբայրական սիրո ողջույնը փոխանցեց նաեւ Սերբիայի Ուղղափառ Եկեղեցու գահակալ Պավել Պատրիարքին եւ Սինոդի անդամներին:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի լուսարարապետ Արարատ եպս Գալթագճյանը, վարչակազմակերպչական գործերի կառավարիչ Փառեն եպս Ավետիքյանը, երկու երկրների դեսպանները, պաշտոնատար այլ անձինք:

# ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ 13-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Հուլիսի 15-21-ը Լիոնում ընթացավ Եվրոպական եկեղեցիների կոնֆերանսի՝ «Քրիստոսով մեկ հույսի կոչվածները» թեմայով 13-րդ համաժողովը: Հայ Առաքելական Եկեղեցուց մասնակցում էին Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ, պատվիրակության ղեկավար Նորվան արք. Զաքարյանը, Իտալիայի հայոց հոգեւոր հովիվ Առեն վրդ. Շահինյանը, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Հովակիմ վրդ. Մանուկյանը, Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն Վահրամ քհն. Մելիքյանը, երեցկին Փուլա Դեւեջյանը, Անի Ղազարյանը (Լոզանի համալսարանի դոկտորանտ):

Մինչ աշխատանքների սկսելը՝ մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին Թեհրան-Երեւան ավիավթարից զոհվածների հիշատակը եւ աղոթեցին նրանց հոգիների խաղաղության համար, իրենց ցավակցությունը փոխանցեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ համայն հայ ժողովրդին: Ապա ընթերցվեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության գիրը՝ ուղղված ԵԵԿ 13-րդ ասամբլեայի մասնակիցներին:

Համաժողովի առաջին լիագումար նիստի ընթացքում ձեւավորվեցին մի շարք հանձնախմբեր, որոնցում մեր Եկեղեցուց ընդգրկվեցին Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն Վահրամ քհն. Մելիքյանը (հանրային խնդիրների հանձնաժողով) եւ երեցկին Փուլա Դեւեջյանը (թեկնածուների առաջադրման հանձնաժողով):

Հուլիսի 16-ին «Մեկ հույս ի Քրիստոս» թեմայով բանախոսությամբ հանդես եկավ հայկական պատվիրակության անդամ Անի Ղազարյանը, ով մասնակցեց նաեւ զեկույցին հաջորդած հարց ու պատասխանին:

Հայ Եկեղեցու պատվիրակները մասնակցեցին նաեւ աշխատանքային բոլոր խմբերի քննարկումներին՝ Եվրոպայի եւ եվրոպական Եկեղեցիների կյանքում առկա արդիական խնդիրների շուրջ:

Հուլիսի 17-ին Հովակիմ վրդ. Մանուկյանը ղեկավարեց «Մարդու իրավունքներ» թեմայով քննարկումը:

Հուլիսի 19-ին՝ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնի օրը, Լիոնի հայկական եկեղեցում ասամբլեայի մասնակիցների ներկայությամբ մատուցվեց պատարագ:

Վերջին օրը՝ հուլիսի 20-ին, ժողովի նիստից առաջ կատարվեց ժամերգություն՝ հայկական ծիսակարգով:

Համաժողովում ընդունվեցին մի շարք հայտարարություններ՝ գաղթականների իրավունքների արժեւորման, ֆինանսական եւ տնտեսական կառույցներում բարոյական սկզբունքների խթանման, մարդու իրավունքների եւ կրոնական ազատության, արարչագործության պահպանության, միջուկային զենքերից աշխարհի ձերբազատման մասին:

Հովակիմ վրդ. Մանուկյանն ընտրվեց ԵԵԿ Կենտրոնական կոմիտեի անդամ, իսկ Մայր Աթոռի միաբան Տ. Շահե աբեղա Անանյանը՝ աշխատանքային խմբի անդամ, որը մինչեւ 2013 թ. վերատեսության պիտի ենթարկի ԵԵԿ առաքելության իրականացման կերպերն ու կանոնադրությունը եւ արդյունքները ներկայացնի ԵԵԿ հաջորդ համաժողովի հաստատմանը:

*Լրատվական բոլոր նյութերը՝*
*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԳՐԻԳՈՐ Ժ ՋԱԼԱԼԲԵԳՅԱՆՑ

## (1443-1465)

*Սկիզբը՝ թիվ 11-13*

1461-ի գարնանը Ջահան-շահը մեծ արշավանք ձեռնարկեց ակ-կոյունլուների դեմ: Նա նախ ավերեց Խլաթի շրջանը՝ կողոպտելով եկեղեցիները եւ ավերելով դրանք՝ սպառնալով նույն կերպ վարվել Մուշի, Խույթի, Սասունի եւ հարակից գավառների հետ: Զաքարիան, պետք է խոստովանել, շտապեց փործանքի առաջն առնել: Նա՝ որպես հաշտարար, գնաց Ջհանգիրի մոտ՝ համոզելու, որ ընդունի հակառակորդի գերիշխանությունը: Բանակցությունները տեւեցին գրեթե երեք ամիս, եւ ի վերջո Ջհանգիրը համաձայնվեց հարկատու դառնալ, իսկ Ջահան-շահը ետ քաշեց իր զորքերն ակ-կոյունլուների տարածքներից:

Զաքարիան հարկը հանձնեց Ջահան-շահին եւ ազատեց հայ եւ մահմեդական բնակիչներին վերահաս վտանգից: Դրանից հետո՝ 1461-ի հունիսին, Զաքարիան վերադարձավ Էջմիածին՝ ավելի ուժեղացած: Բայց հենց դրանից հետո ծախորդությունններն սկսեցին հետապնդել նրան: Ջահան-շահը, որ զորքերը կրկին շարժեց մոնղոլների դեմ, Հայաստանի կառավարչությունը հանձնեց իր որդի Հասան Ալիին, որն իրեն իրավունք վերապահեց հարկելու եւ միջոցներ ձեռք բերելու: Զաքարիան ենթարկվեց հալածանքների, որի արդյունքում Հասան Ալիի եւ Զաքարիայի հարաբերությունները լարվեցին: Դրան նպաստեց նաեւ այն հանգամանքը, որ Զաքարիային չարախոսողներ գտնվեցին: Թերեւս այդպիսի դեր էին կատարել Գրիգոր եւ Արիստակես կաթողիկոսները, որոնք ձգտելու էին հեռացնել Զաքարիային: Զաքարիան միջոցներ ձեռք առավ եւ հեշտությամբ զինաթափ չեղավ, սակայն հաջողություն չունեցավ եւ անչափ վախեցավ, երբ տեղեկացավ, որ Հասան Ալին կամենում է իրեն ձերբակալել եւ փրկագին պահանջել: Զաքարիան ձմեռով ծպտյալ թողեց Էջմիածինը՝ չմոռանալով իր հետ վերցնել Լուսավորչի Աջը, խաչալամը եւ ուրարը:





Զաքարիան սկզբում գնաց Բերկրի՝ ծածկելով իր ինքնությունը Բագավանում եւ Բայազետի բերդում: Նա հասավ Բերկրիի Արգելանի վանք, ներկայացավ եւ ցույց տվեց Լուսավորչի Աջը եւ մյուս սրբությունները: Վասպուրականի հայությունը խիստ ուրախացավ, որ Լուսավորչի Աջն անցել է Աղթամարի ձեռքը: Հետո նա արդեն հաղթականորեն ճանապարհվեց Աղթամար, իսկ ժողովուրդը նրան ընդունում էր հրճվանքով: Մեծ հանդեսներ եղան մասնավորապես Վան քաղաքում, որոնց մասնակցեց քաղաքի կառավարիչ Ջահան-շահի կաթնեղբայր Մահմուդ բեյը: Սակայն Ոստանի Քուրդ իշխանը փործեց նրան ձերբակալել: Զաքարիան հեռացավ Ոստանից եւ Քարադաշտի բերդով անցավ Աղթամար: Դա տեղի ունեցավ 1461 թ. դեկտեմբերի 11-ին: Զաքարիայի հովվապետությունն Էջմիածնում տեւեց ընդամենը մեկ տարի: Չնայած որոշ տեղեկություններին, թե նա կրկին գնացել է Էջմիածին եւ այնտեղ էլ թունավորվել, նման բան չի եղել: Հետեւաբար այն պնդումը, թե նա հովվապետել է մինչեւ 1465 թիվը, չի արդարացվում:

Հավանալի է, որ Զաքարիայի հեռանալով՝ Գրիգորը դարձավ դրության տերը՝ ունենալով Հասան Ալիի աջակցությունը: 1466 թ. հիշատակվում է ոչ միայն Գրիգոր Ժ-ն, այլեւ Արիստակեսը եւ նրա աթոռակից Սարգիսը: Այդ նշան է, որ Գրիգորը ծերացել էր ու դարձել անառողջ եւ նոր գործակից ունենալու պետք է զգացել: Որքան էլ զարմանալի լինի, վերջինս այն Սարգիսն է, որը Լուսավորչի Աջը գողանալով՝ հանձնել էր Զաքարիա Աղթամարցուն: Թե ինչպես է հիշյալ Սարգիսը կրկին ձեռք բերել Գրիգորի վստահությունը, դժվար է ասել: Թերեւս պատճառն այն էր, որ Զաքարիան ըստ արժանվույն չէր գնահատել նրա մատուցած ծառայությունը: Համենայն դեպս, նրան աթոռակից չէր դարձրել: Դրանից վշտացած Սարգիսն օգնել է Գրիգորին եւ նպաստել Զաքարիայի՝ Էջմիածնից փախչելուն: Սարգսի աթոռակցությունը, հակառակ Դավրիժեցու, Մ. Օրմանյանը դնում է ոչ թե 1465-ին, այլ 1462-ին:

Գրիգոր Ժ-ն մահացավ 1465 թ. վերջերին, քանի որ 1465-ին Արիստակեսը լիարժեք կաթողիկոս դարձավ: Անշուշտ ապիկար անձ չէր եւ օգտակար գործեր էլ է կատարել, սակայն իր գործունեությամբ նպաստել է Աղթամարի եւ Սսի աթոռների անջատմանը, ինչպես նաեւ Զաքարիայի՝ Էջմիածնի կաթողիկոսությանը տիրանալուն: Դրական էր այն, որ նա Հայոց Եկեղեցու հովվապետների անցավագին հաջորդականության սկիզբը դրեց: Բայց դա էլ հետագայում մեծ աղետներ բերեց, որոնք երկու դար շարունակ վրդովեցին հայրապետական Մայր Աթոռը:

Զաքարիա Աղթամարցին մահացավ 1464 թ., չնայած չի բացառվում, որ տեղի է ունեցել Գ եւ Դ տառերի շփոթ, եւ նա իրականում մահացել է 1465 թ.: Համենայն դեպս, Զաքարիային փոխարինած Ստեփանոսը հիշատակվում է 1465 թ.: Փաստորեն Զաքարիան եւ Գրիգորը մահացան գրեթե միաժամանակ: Հարկ է նշել, որ Ստեփանոսը ձեռնադրվել էր Էջմիածնում՝ Զաքարիայի կողմից: Լուսավորչի Աջը Ստեփանոսի օրոք շարունակում էր գտնվել Աղթամարում:

Գրիգոր Ժ-ի օրոք Հովհաննես Տարոնեցուն՝ Մշո Սբ Կարապետի Իննակնյա վանքի եպիսկոպոսին զրպարտեցին նախանձոտ քրդերը, թե իբր քանդել է մզկիթի քարերը եւ շինել եկեղեցին: Նա ձերբակալվեց գավառի կառավարչի կողմից, ուղարկվեց Բաղեշի ամիրապետին, որն առանց խնդիրը քննելու՝ նրանից պահանջեց ուրանալ քրիստոնեությունը: Հովհաննեսը մերժեց, սակայն արդյունքը միայն բռնությունները եղան: Նրան մերկացրին, քաղաքով քարշ տվեցին մինչեւ բերդը, կրակի տվեցին, սրով հարվածեցին եւ այնուհետեւ քարկոծեցին: Նրա մարմինը պատվով հողին հանձնվեց Սբ Սարգիս եկեղեցում՝ Բաղեշի արքեպիսկոպոսի ձեռքով: Հովհաննես Տարոնեցին նահատակվեց 1465 թ. ապրիլի 19-ին: 1473 թ. քննություն չի բռնում, չնայած որպես մահվան թվական՝ հիշատակվում է մի գրչի կողմից:

1448 թ. նահատակվեց Աստվածատուր Վանեցին, 1465-ին՝ Սքանդարը, նույն ինքը՝ Ալեքսանդր Ասլան-Մելիքենցը, որի նահատակության տեղը հայտնի չէ: Նահատակվեց նաեւ իշխանազուն Պարոնլույսը 1467-ին Կաֆայում, չնայած դժվար է հավատալ, որ դա եղել է լատինների իշխանության պայմաններում:

*Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*
*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր*

# ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԸ



Վերափոխման տոնը ծագել է քրիստոնեության ամենավաղ ժամանակներից ու հաստատվել 582 թ. Մավրիկիոս կայսեր կողմից: Քրիստոնյա բոլոր Եկեղեցիներն այն նշում են օգոստոսի 15-ին, իսկ հայոց Եկեղեցին, սբ Ներսես Շնորհալու կամ գուցե ավելի հին ժամանակներից եկող սովորության համաձայն, Վերափոխումը տոնում է օգոստոսի 15-ի մերձակա կիրակի օրը, այսինքն՝ օգոստոսի 12-ից մինչ 18-ն ընկած ժամանակահատվածում, որն այս տարի օգոստոսի 16-ին է:

Աստվածամոր վերափոխման եւ, ընդհանրապես, նրա երկրային կյանքի ավարտի հետ առնչվող որեւէ դեպք Ավետարանում հիշատակված չէ: Այնպես որ նրա մահվան եւ հարության մասին մեզ հայտնի հրաշալի պատումները հիմնականում վկայված են եկեղեցական սրբազան ավանդությամբ: Ամենասուրբ Աստվածածնի ողջ կյանքն ու վախճանը (48 թ.) նշանավորվեցին մեծագույն հրաշքներով, որոնց մասին գովերգվում է հատկապես շարականներում:

Այսպես, մեր Տեր Հիսուս Քրիստոսի համբարձումից հետո Աստվածամայրը, Որդու պատգամին հնազանդ, շուրջ 15 տարի ապրեց Հովհաննես Աստվածաբան առաքյալի խնամատարության ներքո: Աստվածամոր հանդեպ վաղ քրիստոնյաների ակնածանքն այնքան մեծ էր, որ նրանք պահպանել ու սերնդից սերունդ են փոխանցել նրա իսկ խոսքերից ու գործերից քաղված պատումներն ու տեղեկությունները: Ուստի սբ Կույսի վերափոխման հետ կապված դեպքերը հայտնի են տակավին առաքելական ժամանակներից:

Իր միածին Որդու համբարձումից հետո Աստվածամայրն օրեր շարունակ հարատեւում էր պահքի ու աղոթքի մեջ: Հաճախ գնում էր Տիրոջ թափուր գերեզմանն ու ծնկաչոք աղոթում: Գողգոթա կատարած իր այցելություններից մեկի ժամանակ նրա առջեւ հայտնվեց Գաբրիել հրեշտակապետը՝ արմավենու ճյուղը ձեռքին՝ որպես խաղաղության խորհրդանիշ եւ ավետեց սբ Կույսի՝ երկրային աշխարհից «ի վերին Երուսաղեմ» գնալու մասին: Տուն վերադառնալով՝ նա պատահածի մասին պատմեց Հովհաննեսին, իսկ հետո՝ մյուս առաքյալներին, ցույց տվեց Գաբրիել հրեշտակապետի կողմից բերված արմավենու ճյուղը, որից երկնային լույս էր տարածվում: Պատրաստվելով դեպի երկինք ճանապարհվելուն՝ Մարիամը պատվիրեց զարդարել սենյակը եւ մոմեր վառել: Իր երկու հանդերձներն ու այլ իրեր նվիրեց իր հետ ապրող այրիներին եւ կույսերին: Այնուհետեւ նա ցանկություն հայտնեց, որ իրեն թաղեն Գեթսեմանիի ձորակում՝ իր բարեպաշտ ծնողների եւ Հովսեփ Արդարի կողքին: Վերջապես լրացավ այն ժամը, երբ պետք է կատարվեր Տիրամոր երկինք վերափոխումը:

Բազմաթիվ մոմեր էին վառված: Առաքյալները շրջապատել էին այն մահիճը, ուր ընկողմանել էր Աստվածամայրը: Այդ պահին «երկնավոր արքայուհու» խաղաղ ու լույսի պես մաքուր դեմքը ճառագում էր, իսկ մարմնից հիասքանչ բույր էր տարածվում: Հանկարծ շողաց չտեսնված մի լույս, որից խամրեցին մոմերի լույսերը: Ներկաները սարսափեցին, երբ սենյակի վերեւում՝ ճառագայթների ներքո, հայտնվեց Հիսուս Քրիստոսը՝ հրեշտակների ու սրբերի ուղեկցությամբ: Աստվածորդին իջնելով կանգնեց Մարիամի մահճի մոտ ու իրակերպ կառքերով նրան փոխադրեց անստվեր լույսի մեջ: Աստվածամայրը թեթեւորեն բարձրացավ մահճից, խոնարհվեց Տիրոջն ու հանգիստ, ասես քնի մեջ, հոգին ավանդեց իր միածին Որդու ձեռքը: Երբ հանդիսավոր թափորը սուրբ առաքյալների ու մյուս հավատացյալների ուղեկցությամբ, վառվող մոմերի եւ օրհներգությունների ներքո մահիճը տանում էր դեպի Գեթսեմանի, հանկարծ երկնքում մի ընդարձակ, լուսափայլ ու պսակաձեւ ամպ գոյացավ եւ սկսեց առաջնորդել թափորը: Երուսաղեմի անհավատ բնակիչները, զարմացած թաղման թափորի անսովոր փառահեղությամբ եւ չարացած Հիսուսի մորը տրված մեծարանքից, այդ ամենի մասին հայտնեցին հրեա քահանայապետերին ու դպիրներին: Վերջիններս, համակված զայրույթով ու վրեժխնդրությամբ, անմիջապես ուղարկեցին իրենց հպատակներին եւ զինվորներին՝ կարգադրելով ցրել թափորն ուղեկցողներին ու այրել մարմինը: Հուզված եւ բորբոքված ժողովուրդն ու զինվորները նետվեցին քրիստոնյաների կողմը, բայց այդ պահին պսակաձեւ ամպն իջավ ներքեւ եւ ասես պատնեշի նման շրջապատեց թափորը: Չնայած հետապնդողներին լսելի էին երգերն ու քայլերի ձայները, սակայն ոչինչ տեսանելի չէր, եւ նրանցից շատերը կուրացան:

Ըստ ավանդության՝ այդ օրը մեկ այլ հրաշք եւս կատարվեց: Այն ճանապարհով, որով անցնում էր հանդիսավոր թափորը, մի հրեա քահանա էր գնում: Երբ լուսակիր ամպը կրկին վերեւում էր, վերջինս հստակորեն տեսավ առաքյալներին ու մյուս ուղեկցողներին, եւ նրա մեջ գլուխ առավ Քրիստոսի հանդեպ ունեցած նախկին չարությունը: Նա, նետվելով մահճի վրա, ցանկանում էր այն գետին տապալել: Բայց հազիվ էր ձեռքերով դիպչել, երբ հանկարծ հրեշտակն աննյութեղեն թրով հատեց նրա երկու ձեռքերը: Կտրված մասերը մնացին մահճին կպած, եւ ինքն աղաղակով գետնին տապալվեց՝ խորապես զղջալով իր խոսքերի եւ գործածի համար: Ուստի Պետրոս առաքյալը նրան կարգադրեց մոտենալ կտրված ձեռքերին ու հպել իրար: Բժշկվելուց հետո նա նույնպես միացավ թափորին, իսկ հետագայում դարձավ Քրիստոսի իսկական հետեւորդներից մեկը: Կուրացածներն Աստվածամոր մահճին զղջումով դիպչելուց հետո հոգեւոր ու մարմնավոր տեսողություն ստացան:

*Շարունակությունը՝ էջ 4*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԼԵՎՈՆ ՇԱՆԹԻ

## «ԻՆԿԱԾ ԲԵՐԴԻ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ» ԵՎ «ՕՇԻՆ ՊԱՅԼ» ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

*Սկիզբը՝ թիվ 11-13*



Ինչպես Գերմանիայից կաշառված ռուս բոլշեւիկները, հանուն հեղափոխության հաղթանակի, ջանացին, որ առաջին համաշխարհային պատերազմում ցարական Ռուսաստանը պարտվի, այդպես էլ հայ բոլշեւիկներն էին Բաքվից, Անկարայից ու Մոսկվայից ստացած հրահանգներով փութացնում Հայաստանի Հանրապետության պարտությունն ու անկումը: Երկրի համար ստեղծված դժվարին կացությունից օգտվելով՝ նրանք դաշնակցում էին թուրքերի հետ եւ նրանց հետ միասին էին գրավում հայրենի տարածքները: Բնորոշ օրինակներից մեկը. Ղազախի կողմից բոլշեւիկացած հայերն էին թաթարների հետ միասին հարձակվում Քարվանսարա-Իջեւանի վրա: Իսկ մենք երբեւէ մեզ չենք էլ հարցրել, թե ինչու էին թուրքերն իրենց բարեբախտությունը համարում ռուսական 10-րդ կարմիր բանակի մուտքը Կովկաս եւ մանավանդ «իսլամական 11-րդ կարմիր բանակի» մուտքը Ադրբեջան ու Հայաստան:

Անգղի նման կտցող, գողի պես հափշտակող Վասիլը նույնպես չէր խորշում իր հայ դաշնակիցների հիշյալ բերդերը գրավելիս դիմել հարեւան մահմեդականների ռազմական օգնությանը: Բավական է միայն հիշել, թե ինչպես էր ամեն առիթով իր ազգակցին՝ հարեւան ու դաշնակից Թորոս իշխանին, ծաղրուծանակի ենթարկող Վասիլը ծրագրել նրա երկրի գրավումը, եւ պատկերը պարզ կդառնա: Նույն Թորոս իշխանին Շանթը բնորոշում է ողբերգության դրական հերոսներից մեկի՝ նույն Գող Վասիլի Սեպուհ որդու միջոցով, որը, իմանալով հոր նկրտումները, Աննայի թելադրանքով մի հին զինվորականի՝ կաղ Ուսեփի միջոցով փորձում է նախազգուշացնել Թորոս իշխանին:

«ԱՆՆԱ - Թորո՛ս. չէ՞ որ ձեր դաշնակիցն է:

ՍԵՊՈՒՀ - Դաշնակի՛ց: Այո՛. ի՞նչ ընենք: Ի՞նչ միամիտ ես: Երեք տարի է՝ հորս ցերեկվան մտածմունքն է ատիկա ու գիշերվան երազը. թեեւ, իհարկե, ծածուկ կպահվի:

ԱՆՆԱ - Անարզաբայի, Սսի, Վահկա տե՞րը:

ՍԵՊՈՒՀ - Այո՛, այո՛: Հա՛յ մարդ է, լա՛վ մարդ, ե՛ւ դաշնակից, ե՛ւ բարեկամ, գրեթե ազգական» (նույն տեղում, էջ 606):

Որեւէ սրբություն չճանաչող աչքածակ ու ագահ Գող Վասիլը ոչ միայն պետությունը թուլացնելու գնով է ընդարձակում իր կալվածքները, այլեւ, որ ավելի դատապարտելի է, հարեւան մահմեդական իշխանությունների հետ է դաշնակցում, որպեսզի իր բարեկամ Թորոս իշխանին նրանց զորքերով նեղը գցի: Ինքը սելջուկների դեմ տարած միացյալ հաղթանակից հետո բազմության առջեւ ցուցադրաբար Լեւոն իշխանի միջոցով շնորհակալություն է հայտնում աջակցության համար, բարեկամության, հավատարմության հավաստիքներ եւ առատ նվերներ է ուղարկում Թորոս իշխանին, որի տրամադրած զորքի օգնությամբ էր տարել սելջուկների դեմ վերջին փայլուն հաղթանակը (ըստ երեւույթին՝ ակնարկվում է Սարդարապատի հաղթանակը), բայց թաքուն պատրաստվում է գարունը բացվելուն, ձյուները վերանալուն պես իր հսկայական զորքով հարձակվելու նույն Թորոսի երկրի վրա.

«ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ- «Թորոսի երկի՛ր», անունը կնքեցիք, էլի՛, «Թորոսի երկի՛ր... Դեռ կտեսնենք որուն երկիրն է ատիկա: (Ծաղրանքով) Պա՛հ, Սիսեն մինչեւ Մերսին, Տավրոսի բարձունքներեն մինչեւ ծով «Թորոսի երկի՛ր»... Նոր հավեր են ելեր, երկաթե հավկիթ կածեն... Այնպես սառույց դնեմ ես անոր ոտքերուն տակը: Էմիր Ղազիի հետ եկած ենք համաձայնության: Այդ հավատը փոխած շունը գարունը բացվելուն պես շարժվելու է Թորոսի վրա... Եթե միաժամանակ կայսեր զորքերն ալ արեւմուտքեն շարժել կարողանամ Տարսոնի վրա, ա՛յ, կդառնա գործ: Բյուզանդիոնի կոկորդն ալ խրած է, չէ՞, այդ Թորոսը: Մինչ ամիս մը ղրկած մարդիկս պետք է որ դառնան, եւ կասկած չունիմ, որ համաձայնություն են բերելու: Թող երկու կողմեն աքցանը հուպ տամ, ա՛յ, այն ժամանակ կտեսնենք «Թորոսի երկիրը»: Կդառնա, ափիս պես, բաց ու անպաշտպան տեղ մը: Կիջնենք քեզի հետ ու կվերցնենք առանց շատ մեծ աղմուկի: Մեյ-մեկ խոշոր պատառ աջի ու ձախի շուներուն, մնացածը կհավաքեմ ձեռքս, եւ ա՛ռ քեզ «Թորոսի երկի՛ր»» (**Լեւոն Շանթ**, Երկեր, Երեւան, «Սովետական գրող», 1989, էջ 610-611): Իսկապես որ «մուրճի եւ սալի միջեւ». այս իրավիճակում էին հայտնվել ամբողջ Հայաստանի Հանրապետությունը եւ մանավանդ Արցախը, Նախիջեւանն ու Զանգեզուրը, որ ջանում էին ադրբեջանականացնել թուրք-բոլշեւիկյան միացյալ ուժերը:

Ընդդեմ յուրայինների օտար թշնամու հետ դաշնակցելը նորություն չէր Գող Վասիլի համար: Ըստ անհրաժեշտության՝ նա իր ընտանեկան գործերին նույնիսկ կարող էր խառնել, անգամ իր աներոջ դեմ կարող էր դուրս բերել Իկոնիայի սուլթանին, որպեսզի նրան հասկացնի իր ով լինելը: Լ. Շանթի պատմահայեցողությունն այնպիսին է, որ նա բոլոր ռոմանտիկների պես կենտրոնանում է պատմաքաղաքական որոշակի հանգամանքներում գործող անհատի վրա: Բայց եթե պատմական անձնավորությունն իր դարում գործել է, ցաքուցրիվ մանր իշխանությունները միավորելով, Կիլիկիան զորեղացնելու նպատակադրումով, ապա գրական կերպարն ունի միանգամայն անձնական շահախնդրություններ, որոնք ի վերջո դառնում են ազգային աղետ: Սսի, Վահկա եւ Անարզաբայի տեր Թորոսի երկրի վրա հարձակումը չի կասեցնում նույնիսկ սիրելի որդու՝ Ատոմի սպանությունը, որ կատարվել էր իր իսկ ձեռքով.

«ԻՇԽԱՆԸ - (Ցնցվելով եւ վճռաբար) ...Ապիրա՛տ իշխան, Ատոմը քեզի շատ կսիրեր. իր մարմինը կհանձնեմ քեզի. կթաղես ամեն հարգանքով, ինչպես վայել է մեծ իշխանի մը միակ ժառանգին: Ես ու իշխան Համազասպը կմեկնինք վաղը լուսաբացին. վաղը առավոտ զորքը պետք է շարժվի: Մահը իր ճամփով, կյանքը իր ճամփով» (նույն տեղում էջ 691):

Իշխանուհի Աննան իր ամուսնուն, զավակներին, իր բերդն ու կալվածքները կորցրած մեր ժողովրդին խորհրդանշող վրիժառու հայ մայրն է, որին Գող Վասիլը նաեւ բարոյական ծանր նվաստացումների է ենթարկում կա՛մ իր, կա՛մ էլ բյուզանդական Կեսարիայից եկած եւ Կիլիկիայում իր կամքը թելադրող հույն կնոջ՝ Սոփյայի քմահաճույքով: Ի դեպ, թատերակում որոշակի նպատակադրումով են պատկերված Կիլիկյան Հայաստանում բյուզանդական մեծամոլ ներկայացուցիչները՝ Սոփյան, նրա մորեղբայր Անդրոնիկոսը, որի ուշք ու միտքը լավագույն ձկնատեսակները ճաշակելն է, եւ Իրինան: Սրանք Հայաստանում իրենց տեր ու տիրական են զգում, պարտադրում են իրենց մեծարել բյուզանդական կայսրության բարձրագույն տիտղոսներով եւ առիթը բաց չեն թողնում ծաղրելու հայկական ամեն ինչ՝ անգամ լեզուն ու վարվեցողությունը, նսեմացնելու իշխանուհի Աննային ու իրենց կարծիքով բարբարոս մյուս տեղացի հայերին: Իշխանի հույն կինը՝ Սոփյան, եւ սրա հետ միասին եկած Իրինան, միմյանց հաստատելով, ասում են. «Իրա՛վ է, մենք հոս չենք եկած այս լեռնցիներուն բարոյականության դաս տալու» (նույն տեղում, էջ 625), կամ «Իրի՛նա, կարծեմ մենք կրնանք հեռանալ: Անասուններու լեզուեն ես շատ բան չեմ հասկնար» (նույն տեղում): Առօրեական թվացող այս խոսակցությունը բացահայտում է ընդհանրապես Հայաստանում իշխող օտարների՝ հայերի նկատմամբ վերաբերմունքը: Դա նկատելուց ու հասկանալուց հետո է Գող Վասիլն իր պալատից հեռացնում Սոփյային ու նրա մարդկանց՝ նույնիսկ բյուզանդական իշխանությունների հետ հետագա հարաբերությունները խզելու գնով: Սա՛ էլ նորօրյա հայ գործիչներին ուղղված որոշակի ակնարկ էր:

*Շարունակությունը՝ էջ 5*

# ...ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԸ



*Սկիզբը՝ էջ 3*

Այսպես, հասնելով Գեթսեմանի՝ «ջահազգեստյալ սուրբ կույսի» մարմինը դրեցին քարայրի մեջ եւ մուտքը ծածկեցին մի հսկա քարով: Առաքյալներն ու մյուս հավատացյալները շուրջ 3 օր չէին հեռանում Աստվածամոր գերեզմանից՝ անընդմեջ աղոթելով: Այդ ամբողջ ընթացքում չէր դադարում հրեշտակների երգը: Եվ միայն երրորդ օրը Գեթսեմանի եկավ Բարթողոմեոս առաքյալն ու սկսեց հուսակտուր ողբալ եւ լաց լինել, որ չարժանացավ սուրբ Աստվածածնին վերջին հրաժեշտը տալուն ու նրանից օրհնություն ստանալուն: Կարեկցանքից դրդված՝ առաքյալները որոշեցին բացել քարայրի մուտքը, որպեսզի նա կարողանա խոնարհվել հավերժակույսի մասունքների առջեւ: Բայց մուտքից քարը հեռացնելուց հետո բոլորը տեսան եւ հաստատեցին, որ Աստվածամոր մարմինն այնտեղ չէր, այլ վերափոխվել էր անճառելի փառքերի մեջ: Հենց Բարթողոմեոսին էր սահմանված, որ Աստծո իմաստուն նախախնամությամբ միջոց դառնա՝ բացահայտելու Աստվածամոր հարությունը: Քարայրում միայն Տիրուհու հանդերձանքն էր, որից աներեւակայելի անուշահոտություն էր տարածվում: Ուստի նրա երկրավոր կյանքի վախճանն ավելի շատ ննջում, քան թե մահ բառով է որակվում: Սակայն նրա հարությունը ճանաչվեց եւ ընդունվեց միայն Թ-ԺԲ դարերում, իսկ տոնն էլ այդ առիթով կոչվեց «Վերափոխումն սուրբ Աստուածածնի»:

Աստվածածնի մահվան պատմությանը կից ավանդության մեջ հիշատակվում է նաեւ նրա պատկերի մասին: Ի մխիթարություն Բարթողոմեոսի, որը ներկա չէր եղել Տիրամոր թաղմանը, նրան հանձնեցին այն կենդանագիր պատկերը, որ սբ Կույսն օրհնելով տվել էր Հովհաննես ավետարանչին: Հայկական աղբյուրներից հայտնի է, որ Բարթողոմեոսն այն բերել է Հայաստան ու դրել Անձեւաց գավառի Դարբնոց քար կոչված վայրում, ուր եւ հիմնվեց կուսանոց՝ ի պատիվ Տիրամոր պատկերի: Ի դեպ. հայոց եկեղեցիների բոլոր խորաններն Աստվածամոր անունով են ու նրա պատկերով:

Աստվածամոր Վերափոխման տոնակատարության օրը՝ սբ պատարագից անմիջապես հետո, տեղի է ունենում Խաղողօրհնեքի արարողություն: Այս սովորությունը ոչ մի առնչություն չունի տոնի բուն խորհրդի հետ, այլ գալիս է շատ հին ժամանակներից: Հնում տարվա առաջին բերքն ընծայվում էր Աստծուն: Ըստ օրենքի՝ այդ բերքերն էին ցորենը, գարին, խաղողը, թուզը, նուռը, ձիթապտուղը, մեղրը եւն: Այդ նվիրատվության արարողությամբ մարդիկ Աստծուն էին հայտնում իրենց երախտագիտությունը: Հին Կտակարանում եւս կա նմանօրինակ սովորության ակնարկ (Բ Օր. ԻԶ 1-2): Ինչպես Հրեաստանում եւ այլ երկրներում, այնպես էլ Հայաստանում նախաքրիստոնեական շրջանում գոյություն ունեին այդ արարողությունները: Տարվա առաջին պտուղն ու բերքը հայերը նվիրում էին տաճարին: Հեթանոսական ժամանակներից եկող այդ ծեսերի մնացուկները մասամբ պահպանվել են ժողովրդի մեջ՝ քրիստոնեության հետ, սակայն, ստանալով նոր իմաստ ու բովանդակություն: Քրիստոնեական շրջանում տարվա բերքի խորհրդանիշ ընտրվեց խաղողը եւ օրհնվելու նպատակով միայն այդ միրգը տարվեց եկեղեցի: Այս պտղի նախապատվությունը համակցվում է Քրիստոսի հետ, որն Իրեն որթատունկին նմանեցրեց: Բացի դրանից, պտուղներից խաղողն էր, որ վերջին ընթրիքին գինու տեսքով ծառայեց Նրան՝ վերածվելով Նրա անապական Արյանը: Վերափոխման տոնի օրը եկեղեցու խորանի վրա կատարվող խաղողի օրհնության ընթացքում աղոթքներ են մատուցվում ոչ միայն պտղի, այլեւ դրա մշակողի, ընծայողի, հողագործի եւ հողի համար՝ Արարչից խնդրելով առատ, բերրի, աղետներից զերծ տարի: Նախկինում տեղական սովորություն է եղել հոգեւորականի կամ այլ անձանց այգում քահանաների ու մյուս սպասավորների մասնակցությամբ նույնպես կատարելու խաղողի օրհնություն: Իսկ բուն տոնի հետ Խաղողօրհնեքը կապված է զուտ եղանակային առումով:

***Եղիա աբեղա ԽԱՉԱՏՐՅԱՆ***

# ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 13-18-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

## (ընդհանուր ակնարկ)



*Կիլիկիայի հայոց թագավորությունը, 1266 թ.*

13-18-րդ դարերը շարունակական, բայց տարբեր պատմամշակութային բնութագիր ունեն: Ակնարկային այս բաժինը ժամանակային առումով միասնական ենք ներկայացնում՝ կապված պատմաքաղաքական իրադարձությունների հետ: Կիլիկիայի հայոց պետականության անկումից հետո հայ ժողովուրդը դատապարտվեց ձուլման եւ օտարացման, իսկ բուն Հայաստանում ուժեղացան բռնությունները, ինչն իր հերթին նոր թափ հաղորդեց ազգակործան արտագաղթին:

13-18-րդ դարերն ակնհայտորեն կարող են բաժանվել երկու մասի՝ 13-15-րդ եւ 16-18-րդ դարեր: Առաջին ակնարկային բաժնին (13-15-րդ դարեր) կհաջորդեն առակագիրների՝ Մխիթար Գոշ, Վարդան Այգեկցի, մատենագիրների՝ Կիրակոս Գանձակեցի, Ստեփանոս Օրբելյան, եւ տաղերգուների՝ Ֆրիկ, Հովհաննես Երզնկացի, Խաչատուր Կեչառեցի, Հովհաննես Թլկուրանցի, Առաքել Սյունեցի, Առաքել Բաղիշեցի, Մկրտիչ Նաղաշ, մենագրական գլուխները, իսկ հաջորդ ակնարկային բաժնին (16-18-րդ դարեր) կհաջորդեն Գրիգորիս Աղթամարցի, հայրեններ (Նահապետ Քուչակ), Ներսես Մոկացի, Նաղաշ Հովնաթան, Պաղտասար Դպիր, Պետրոս Ղափանցի, Հովհաննես Կարնեցի եւ Սայաթ-Նովա մենագրական գլուխները:

Այսպիսի տրոհման սահմանաբաժանը պայմանավորված է գրականության բովանդակության միտվածությամբ եւ լեզվով, որն աշխարհաբարացող (բարբառայնացվող) միջին հայերենն է: Այս զարգացումները թեեւ նույնությամբ չեն տարածվում բոլորի վրա, որովհետեւ հայությունը՝ որպես ժողովուրդ, որպես տարածքային միանություն եւ մշակութային ամբողջություն, միասեռ չէր, բայց հատկապես այդ զարգացումներն են բնորոշում ժամանակի պատկերը: Եթե 13-15-րդ դարերում հայ միջնադարն արթնանում էր նիրհից, ապա 15-18-րդ դարերում միջնադարն արդեն միտվում էր դեպի նոր դարաշրջան:

13-րդ դարի երկրորդ կեսին Հայաստանն ընկավ թաթար-մոնղոլների գերիշխանության ներքո: Սելջուկ թուրքերին հաջորդեցին արեւելյան նոր ցեղերը՝ նույնքան վայրի եւ նույնքան դաժան, որոնց արշավանքներն սկսվեցին 1236-ից հետո եւ ավարտվեցին 1384-ին՝ Թողթամիշի 50.000-անոց բանակի գրոհներով:

Ավերածությունների եւ ժողովրդին ստրկացնելու առաջին կործանարար ալիքն ընթացքում խաղաղվում է: Արեւմուտքում Կիլիկիայի հայկական թագավորությունն էր, արեւելքում իշխանական տներն ու հոգեւոր կենտրոններն էին: Կիլիկյան հայոց թագավորությունն ամուր հենարան էր բուն Հայաստանի համար, որտեղ դեռեւս պահպանվել էին նախարարական-իշխանական տները՝ Բագրատունիներ, Զաքարյաններ, Օրբելյաններ, Պռոշյաններ... Այդ կառույցները թաթար-մոնղոլների օրոք պահպանվեցին, որպեսզի երկիրը կարգի գար եւ չխափանվեր հարկահանությունը, ինչը դեռեւս այդքան դաժան ու վայրագ չէր եղել:

Հարկը չվճարելու դեպքում վճարում էին կյանքով կամ պատանդությամբ ու գերությամբ: Եկեղեցին ազատվեց հարկից, ինչն էլ նպաստեց հոգեւոր կենտրոնների զարգացմանը (Հաղպատ, Սանահին, Նոր Գետիկ, Խորանավանք, Տաթեւ, Նորավանք եւ այլն): Պահպանվել էր կրթական գործը, իրենց սաներին բարձրակարգ գիտելիքներ էին տալիս միջնադարյան համալսարանները (Գլաձոր, Տաթեւ) եւ վանական բազմաթիվ դպրոցները:

Թաթարներն արեւմուտք արշավեցին որպես հեթանոսներ, աստվածներ: Սկզբնական շրջանում անտարբեր չէին քրիստոնեության հանդեպ՝ հատկապես Արղունի օրոք: Բայց արդեն Ղազան ղանի ժամանակ (1295-1304) նրանք ընդունեցին մահմեդականություն, եւ հետագայում պատկերը փոխվեց: Սկսվեցին նաեւ կրոնական հալածանքները:

Հոգեւոր-մշակութային կենտրոն էր Կիլիկիայի հայոց թագավորությունը (1080-1375): Ներկայացնում ենք Կիլիկիայի հայոց գահակալներին:

**Մեծ իշխաններ՝**

Ռուբեն Ա (1080-1095), Կոստանդին Ա (1095-1100), Թորոս Ա (1100-1129), Լեւոն Ա (1129-1137), Թորոս Բ (1145-1169), Ռուբեն Բ (1169), Մլեհ (1169-1175), Ռուբեն Գ (1175-1187), Լեւոն Բ (1187-1198):

**Թագավորներ՝**

Լեւոն Բ (1198-1219), Զաբել (1219-1252), Ֆիլիպ (1222-1225), Հեթում Ա (1226-1269), Լեւոն Գ (1269-1289), Հեթում Բ (1289-1296, 1299-1301), Սմբատ (1296-1298), Կոստանդին Բ (1298-1299), Լեւոն Դ (1301-1308), Օշին (1308-1320), Լեւոն Ե (1320-1342), Կոստանդին Գ (Գվիդոն-Կի 1343-1344), Կոստանդին Դ (1345-1363), Կոստանդին Ե (1365-1373), Լեւոն Զ (1374-1375):



*Կիլիկիայի հայոց թագավոր Լեւոն Ա Ռուբինյանի դրամը, XII դ.*

Կիլիկիայում էր գտնվում հայոց կաթողիկոսությունը: Բարգավաճում էին քաղաքները: Ամուր հիմքերի վրա էր դրված կրթական գործը: Զարգանում էին արվեստները՝ գրականություն, մանրանկարչություն, երաժշտություն:

Աշխուժություն էին ապրում քաղաքային կյանքն ու առեւտուրը: Նշանավոր կենտրոններ էին մայրաքաղաք Սիսը, Սելեւկիան, Ադանան, Անարզաբան, նավահանգստային քաղաքներ Այասը, Տարսոնը: Այասը նույնիսկ մրցակցում էր Ալեքսանդրիայի հետ:

Մշակութային-կրթական գործը կենտրոնացված էր վանքերում, որոնք գտնվում էին Սեւ լեռան վրա, Լամբրոնում, Դրազարկում, Սկեւռայում եւ այլուր: Այս շրջանի նշանավոր դեմքերն են այնպիսի պատմիչներ, մատենագիրներ, օրենսգիրներ, տաղերգուներ, առակագիրներ, նկարիչներ, ինչպիսիք են **Սմբատ սպարապետը, Հեթում պատմիչը, Վարդան Այգեկցին, Վահրամ րաբունին, Թորոս Ռոսլինը, Սարգիս Պիծակը, բժշկապետ Մխիթար Հերացին:**

1375 թ. Կիլիկիան ընկավ Եգիպտոսի մամլուքների հարվածներից: Մահմեդականների եւ քրիստոնյաների առճակատումն այս դեպքում ուներ նաեւ այլ դրդապատճառներ:

Նախ՝ Եգիպտոսի սուլթանության դեմ էր ուղղված հայ-մոնղոլական դաշինքը, եւ ապա՝ առեւտրական փոխադրումների ու տնտեսական պայքարի մեջ մեծ էր Կիլիկիայի դերը:

1441 թ. հայրապետական աթոռը Սսից տեղափոխվեց Էջմիածին:

**Սմբատ սպարապետը** (գունդստաբլ, 1208-1275) պատմիչ էր, օրենսգետ եւ թարգմանիչ: Լինելով Հեթում Ա-ի եղբայրը եւ զբաղեցնելով ռազմաքաղաքական բարձր աստիճան՝ նա շատ մոտ էր կանգնած երկրի կառուցման աշխատանքներին, ինչն արտահայտվել է նաեւ նրա գրական գործունեության մեջ՝ *«Պատմութիւն յունաց ի Կոստանդնուպալիս եւ հայոց մեծաց ըստ կարգի ժամանակաց»* (կամ՝ *«Տարեգիրք»*, Մոսկվա, 1856):

Ընդգրկում է 951-1136 թվականները, դեպքերը ներկայացված են ժամանակագրությամբ, օգտվել է Մատթեոս Ուռհայեցուց: Այնուհետեւ՝ *«Անսիզք Անտիոքայ»* (օրենքների թարգմանություն ֆրանսերենից, որն ունի բնագրի արժեք, քանի որ հիմքը չի պահպանվել), *«Յաղագս դատարանաց թագաւորաց»* (օրենսգիրք, 1265):

**Հեթում պատմիչն** Օշին իշխանի որդին էր, Կոռիկոս բերդի իշխանը, Լեւոն Դ-ի մարաջախտը: 1305-ից եղբայր Անտոն անվամբ ապաստանել է Կիպրոսի լատինական մի վանքում:



*Հեթում արքա*

Նա հայտնի է իր *«Պատմութիւն թաթարաց»* գրքով՝ գրված 1307 թ. Հռոմի Կղեմես V պապի պատվերով: Իր կողմից ֆրանսերեն թելադրվել եւ արձանագրվել է եղբայրակից միաբան Նիկողայոս Ֆալքոյի գրչությամբ, որն էլ այն թարգմանել է լատիներեն: Այնուհետեւ տարածվել է եվրոպական մի շարք լեզուներով, եւ միայն 1842-ին Մ. Ավգերյանը թարգմանել է հայերեն (տե՛ս նաեւ **Հեթում պատմիչ**, [Պատմութիւն] թաթարաց, Վենետիկ, 1951):

Նրա պատմագիտական աշխատություններից են *«Պատմութիւն ազգին Ռովբինանց, թէ որպէս տիրեցին Կիլիկիոյ»*, *«Ազգաբանութիւն թագաւորացն Երուսաղէմի եւ թագաւորացն Կիպրոսի»*, *«Ազգաբանութիւն Բրընձնոյն Անտիոքայ»*:

Նրան է վերագրվում նաեւ *«Պատմութիւն խրոնիկոնի»* գիրքը, որի մեջ տրված է Հռոմի ինքնակալների եւ պապերի ժամանակագրությունը՝ Քրիստոսից սկսած (տե՛ս **Կյուրեղ Քիպարեան**, Պատմութիւն հայ հին գրականութեան, Վենետիկ, 1992, էջ 604-605):

*Շարունակելի*

***Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԼԵՎՈՆ ՇԱՆԹԻ...

*Սկիզբը՝ էջ 4*

**4.**

Անշուշտ, մենք «Ինկած բերդի իշխանուհին» ողբերգության մեջ Հայաստանի Առաջին Հանրապետության անկման պատճառներն ակնարկող բոլոր այլաասացություններին չենք անդրադառնա, մանավանդ որ դրանք առավել թափանցիկ են «Օշին պայլ» ողբերգության մեջ, որը գրվել է նախորդից ութ տարի հետո: Գեղարվեստի մեջ կենսական ճշմարտության բացահայտման ձգտող հեղինակն, այնուամենայնիվ, ամեն ինչ ուղղակի ու մերկապարանոց չի ասում: Ուղղագիծ թեկուզ եւ պատմական ճշմարտությունը կամ քաղաքական մերկապարանոց հայտարարությունը դեռեւս չեն դառնում գեղարվեստական ճշմարտություն: Վերջինս հրամայաբար պահանջում է համոզչություն, որը հնարավոր է դառնում միայն կերպավորվող հերոսների արարքների հոգեբանական հիմնավորմամբ:

Արդյո՞ք լիարժեք համոզիչ են «Ինկած բերդի իշխանուհին» ողբերգության հերոսների գործողությունները: Հրաշալի հյուսված դիպաշարը, գործողությունների զարգացման հետաքրքիր ընթացքը թերեւս կասկածի տեղ չեն թողնում: Աննայի վրիժառությունը՝ իր մորթված զավակների դիմաց Գող Վասիլի զավակներին իրենց իսկ հոր ձեռքով սպանել տալով, անգամ իր սիրած տղային՝ Ատոմին զոհաբերելով, անշուշտ, ազդեցիկ է: Տպավորիչ է եւ այն, որ Աննան գիտի Անգղների աշտարակի պատժարանի սարսափը, նույնիսկ հարցնում է՝ իսկ կին կախվե՞լ է, բայց չի երկնչում մերկ մարմնով կախվելուց ու գիշանգղների հոշոտմանն արժանանալուց ու սառնասրտորեն իրագործում է չտեսնված ու չլսված վրիժառությունը: Սակայն, այս ամենով հանդերձ, ընթերցողը կամ հանդիսատեսը այդ թատերակն ընթերցելիս կամ նրա բեմադրությունը դիտելիս ունենում է մի ներքին չբացատրվող անբավարարություն: Ինքը՝ Լեւոն Շանթն էլ է դա գիտակցել եւ համբերել է: Երկու թատերակների միջեւ ընկած ութ տարին բավական ժամանակ էր՝ որոշ հեռավորությունից առավել սթափ հայացքով դիտարկելու արդեն ողջ Արեւմտյան Հայաստանը, Արցախն ու Նախիջեւանը, ինչպես եւ 1921-22 թթ. ֆրանսիական պետության «բարեհաճությամբ» Կիլիկիան թուրքերին հանձնելու իրողությունը խորությամբ ըմբռնելու եւ կատարված անորակելի ողբերգությունն ավելի բարձր արվեստով պատկերելու համար:



*Շարունակելի*

***Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# ՍՈՒՐԲ ԲԱՌԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ



*Սուրբ* ածականը պատկանում է հայերենի գործուն բառապաշարի շերտին: Այն ունի կիրառության բարձր հաճախականություն ե՛ւ ժամանակակից արեւելահայերենում, ե՛ւ արեւմտահայերենում: Այն կիրառվել է նաեւ լեզվի զարգացման բոլոր փուլերում: Նախագրաբարյան, նախաքրիստոնեական շրջանում այն ունեցել է պարզապես «մաքուր, փայլուն» իմաստը: Այս բառի կրոնական իմաստը առնչվում է սոգդերենի zp'rt «մաքուր» բառի հետ՝ «սուրբ, ֆրանս. saint» նշանակությամբ: *Սուրբ* բառի ծագման մասին հայ մատենագրության, ինչպես նաեւ այլալեզու գիտական-լեզվաբանական գրականության մեջ կան տարաբնույթ վկայություններ: Նոր հայկազյան բառարանը, Հյուբշմանը, Մյուլլերը, Տերվիշյանը, Ալիշանը, Կարստը եւ ուրիշներ հիմնականում վկայակոչում են արաբերեն, պարսկերեն, թուրքերեն, շումերերեն եւ սանսկրիտով բառեր՝ կապված *ջուր, ջրով լվանալ, մաքուր, պայծառ, առողջ, ողորկ* իմաստների հետ:

Ըստ Հրաչյա Աճառյանի՝ *սուրբ* բառը հայերենի բնիկ բառապաշարի միավոր է, որը ժամանակակից հայերենում ունի «մաքուր, անարատ, նվիրական» իմաստները: Այն ծագում է հնդեվրոպական նախալեզվի k'ubhro՝ «փայլուն, պայծառ, գեղեցիկ, մաքուր» արմատից, ընդ որում՝ հայերենում տեղի է ունեցել արմատի bhr > rb հնչյունափոխություն, որը ենթադրում է *սուրբ* բառի համար ավելի նախնական *սուբր* ձեւը:

Քրիստոնեական աստվածաբանական բառապաշարում «սուրբ» բառն ունի տերմինային արժեք: Որպես մասնագիտական բառ գործածվելիս «սուրբ» բառը տարբերվում է սովորական կիրառություններից եւ գործածվում է ճշգրիտ եւ ստույգ սահմանված հասկացություններ արտահայտելու համար: Տերմինային կիրառություն ունի ընդհանրական եւ Հայ Եկեղեցու սրբադասման մեջ ընդունված մարտիրոսների եւ քրիստոնեական վկաների անուններին ավելացվող «սուրբ» մակդիրը: Օրինակ՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի (Եկեղեցին ոչ միայն սուրբ է, մաքուր, նվիրական, այլեւ սրբարար, որտեղ կարող են գալ եւ անդամակցել բոլոր մեղավորները), սբ Աստվածածին, սբ Հռիփսիմե, սբ Սանդուխտ կույս, սբ Ոսկյանք, սբ Վարդանանք եւ այլն, եւ այլն: «Սուրբ» տերմինով են կոչվում նաեւ եկեղեցիների եւ սրբավայրերի անունները: Ինչպես՝ Սուրբ Երուսաղեմ, Սբ Կաթողիկե, Սբ Հարություն եւ այլն: «Սուրբ» բառը տերմինային արժեք ունի նաեւ քրիստոնեական դավանաբանությանը, ծիսական արարողակարգին, քրիստոնեական տոներին, սրբազան իրերին ու անոթներին վերաբերող բառակապակցություններում: Օրինակ՝ Սուրբ Երրորդություն, Սուրբ Հոգի, Սուրբ Ծնունդ, Սուրբ Հարություն, սուրբ մյուռոն, սուրբ պատարագ, սուրբ խորան, սուրբ գեղարդ, սուրբ դաստառակ եւ այլն:

Ժողովրդական խոսքում *սուրբ* բառը խիստ գործածական է եւ հիմնականում հանդես է գալիս հնչյունական տարբերակներով, ինչպես՝ *սուրբ*' (Մուշ), *սույբ*' (Զեյթուն), *սօրփ* (Ղարաբաղ, Գորիս, Մեղրի), *սօ″րփ* (Ճարտար, Շուշի, Նոր Շեն), *սուրփ* (Ագուլիս, Ալաշկերտ, Ախալցխա, Ակն, Առտիալ, Բուրդուր, Խարբերդ, Մալաթիա, Մոկս, Շամախի, Պոլիս, Ջուղա, Ուրմիա եւ այլն), *սուրպ* (Համշեն, Շիրվանշեխ), *սօ″րպ* (Խտրբեկ), *սուփ* (Երզնկա, Նոր Նախիջեւան, Թիֆլիս), *սուռփ* (Մարաղա, Բուրաստան), *սըրփ// սէօրփ* (Սվեդիա), *սու″րփ* (Անտիոք, Ասլանբեկ), *սըրփ* (Շատախ, Վան), *սըփ* (Տիգրանակերտ, Ակն) եւ այլն: «Սուրբ» բառի բարբառային հոգնակի ձեւերը եւս հետաքրքրություններ են ներկայացնում, այսպես՝ *սրբունաք* (Եվդոկիա), *սրբորէք* (Խութ) եւ այլն:

«Սրբասուրբ» իմաստն է արտահայտում Վանի բարբառի *սրպանական* բառը: Նոր Նախիջեւանի *սրբունակ* բառը բազմիմաստ է եւ նշանակում է՝ 1) սուրբ, նվիրական, 2) սրբակյաց: Տիգրանակերտի բարբառին բնորոշ էին *սըփըրգուն, սըբըրկիկ* բառերը՝ «մաքրասեր» իմաստով: Նույն տարածքում «սուրբ» բառը միացել է «սկիհ» բառին եւ կազմել *սուրփսըգին* կցական բարդությունը՝ նշելով ծիսական սուրբ անոթներից մեկը:

«Սուրբ» բառի փոխարեն կրոնական նշանակությամբ գործածական էին *ա″գիգ* (Վան), *անարադ* (Տիգրանակերտ), *արանուդ* (Սվեդիա) եւ այլ բառեր:

Հայերենի բարբառներում *սուրբ* արմատի կրկնությամբ կազմվում են նոր բառեր «*սրբասուրբ, սրբագույն, մաքուր*» իմաստներով. ինչպես՝ *սէրսուբ*' (Մուշ), *սէրսուփ* (Ալաշկերտ), *սուրսուփ//սա″րսուփ* (Մոկս, Բուլանուխ, Խիզան, Խլաթ, Խնուս, Հազզո, Վան) եւ այլն:

*Սրբակ* բառը, որով անվանվում է կոկորդի փողը, անցքը, կազմված է *սուրբ* եւ *ակ* բաղադրիչներից: Այս բառանվան ծագումը հավանաբար Աստվածաշնչով է պայմանավորված: Ըստ Հին Կտակարանի՝ Աստված մարդկանց համար որպես կերակուր սահմանեց սուրբ, այսինքն՝ մաքուր համարվող կենդանիները՝ դրանք զանազանելով անսուրբ կենդանիներից: Այդ ակը, այսինքն՝ փողը, մարդկային կոկորդը սահմանված է միայն սուրբ համարվող կենդանիներ, ինչպես եւ ընդհանրապես մաքուր այլ սնունդ ընդունելու համար, որի պատճառով էլ, երեւի, կոչվում է *սրբակ*:

«Սուրբ» բառով կազմվում են կրոնական նշանակություն ունեցող մի շարք բաղադրյալ բառեր, որոնք ենթարկվել են տարբեր բնույթի հնչյունափոխությունների:

Այսպես՝ սուրբ խաչին նվիրված տաղավար տոնը՝ Խաչվերացը, խոսակցական-բարբառային հայերենում կոչվում է *սըբխէչ, սըպխէճ, սըպխէջ, սըփխէչ* (Կարին, Սասուն, Մուշ, Արարատյան):

Մեծ Հայքի Այրարատ նահանգի Ճակատք գավառում գտնվող Սուրբ Մարիամ > Սուրբ Մարի բերդաքաղաքի, ապա նաեւ համանուն դաշտի անվանումը, ենթարկվելով հնչյունափոխության, բարբառներում ստացել է Սուռմառի > Սուռմառու> Սուրմալու ձեւը:

Նախիջեւանի Ազնաբերդ գյուղում կա մի փոքրիկ մատուռ՝ սուրբ Հակոբի անունով: Տեղի խոսվածքում այն ունի *Սըրգագոփ* հնչյունափոխված ձեւը: *Սրբանեսի* վանքի անվանումը եւս արգասիք է հնչյունափոխության: Վայոց ձորի խոսվածքում գործածելի է նաեւ *Սըռվանէս* բառաձեւը:

*Շարունակությունը՝ էջ 8*

# Իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ...



Ծննդոց գիրքը պատմում է, թե ինչպես, երբ մեղքն աշխարհ մտավ, մեղքի հետ նաեւ՝ մահը, մարդկային բնությունը կորցրեց աստվածապարգեւ խաղաղությունը՝ լցվելով խռովությամբ ու թշնամությամբ: Սակայն Քրիստոսի փրկագործ տնօրինությամբ խաղաղություն հաստատվեց երկնքի եւ երկրի միջեւ: Այս էր, որ երգում էին հրեշտակների անմարմին դասերը. «Փա՛ռք Աստծուն՝ բարձունքներում, եւ երկրի վրա խաղաղությո՛ւն, եւ հաճությո՛ւն՝ մարդկանց մեջ» (Ղուկ. Բ 14): Մեր Տեր Հիսուս Քրիստոսը, մոտենալով արդեն չարչարանքներին, ի թիվս այլ խրատների, նաեւ հետեւյալն է ուսուցանում. «Խաղաղություն եմ թողնում ձեզ, Իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. ձեզ չեմ տալիս այնպես, ինչպես այս աշխարհն է տալիս. ձեր սրտերը թող չխռովվեն եւ չվախենաք» (Հովհ. ԺԴ 27): Երանելի՛ է մարդը, որ Քրիստոսով ոչ միայն վերագտավ կորցրած խաղաղությունը, այլեւ հաստատվեց աստվածային խաղաղության մեջ՝ արժանանալով Աստծո որդի լինելու շնորհին, ինչպես Տերն է ասում. «Երանի՛ խաղաղարարներին, որովհետեւ նրանք Աստծու որդիներ պիտի կոչվեն» (Մատթ. Ե 9): Իսկ սբ Հովհաննես առաքյալն ավելացնում է. «Տեսեք՝ ինչպիսի սեր շնորհեց մեզ Հայրը, որպեսզի մենք կոչվենք Աստծու որդիներ» (Ա Հովհ. Գ 1): «Եվ եթե որդիներ ենք, ապա եւ՝ ժառանգներ. ժառանգներ Աստծու եւ ժառանգակիցներ Քրիստոսի» (Հռոմ. Ը 17): Ուրեմն ամեն ոք, ով խաղաղարար եւ խաղաղասեր է, Աստծու որդի է կոչվում: Քրիստո՛սն է մեր խաղաղությունը, Ով Իր կյանքը մեզ որպես օրինակ ապրեց՝ պատվիրելով լինել հեզ եւ սրտով խոնարհ եւ ոչ՝ խռովարար, որովհետեւ խռովարար ու խռովասեր մարդը, ով մարդկանց դրդում է խռովության ու կռվի, սատանայի որդի է կոչվում: Քրիստոսի պարգեւած խաղաղությունը վեր է ամեն տեսակ մարդկային մտքից եւ իմացումից (տե՛ս Փիլ. Դ 7), եւ դժբախտ է այն մարդը, որը չի ճաշակել այդ խաղաղության քաղցրությունը, չունի հոգու խաղաղություն, ապրում է խռովքի, անհանգստության, տագնապների ու անհասկանալի վախերի մեջ, քանզի նրա սրտում դեռ տեղ չի գտել աստվածային խաղաղությունը, նրա սրտում տեղ չկա խաղաղության Իշխանի համար: Եկեղեցու հայրերը նշում են նաեւ, որ Քրիստոսի պարգեւած խաղաղությունը որեւէ առնչություն չունի այս աշխարհի նյութական բարիքների, ունեցվածքի հետ, որովհետեւ մարդը կարող է աղքատ եւ չքավոր լինել, սակայն Քրիստոսի խաղաղությունն ունենալով իր հոգում՝ իրեն աշխարհի ամենաերջանիկ մարդը համարել: Սակայն հաճախ տագնապային, անհանգիստ, նույնիսկ հուսահատական վիճակում են հայտնվում աստվածհայտնության քաղցրությունն ապրած շատ քրիստոնյաներ, ովքեր կյանքի ինչ-ինչ իրավիճակներում կորցնում են իրենց խաղաղությունը՝ մատնվելով անհուսության: Ի՞նչն է պատճառը. մի՞թե կյանքի հասցրած հարվածներն ու փորձությունները կարող են խաթարել քրիստոնյայի հոգում հաստատված աստվածային խաղաղությունը: Այս առնչությամբ սբ Մակար Մեծն ասում է. «Քրիստոնյաները, զգեստավորվելով Սուրբ Հոգով, լինում են խաղաղության մեջ: Եթե անգամ պատերազմ է սկսվում դրսից, կատաղում է սատանան, ապա նրանք ներքուստ պարսպված են Տիրոջ զորությամբ եւ չեն տագնապում սատանայի հարձակումից»: Սրբի խոսքից կարելի է եզրակացնել, որ վերը նշված իրավիճակներում իրենց խաղաղությունը կորցրած մարդկանց սրտում Քրիստոսի խաղաղությունն ամուր չէր հաստատված, եւ այս աշխարհի փորձությունների քամիները կարողացան այն սասանել: Անշուշտ, խիստ դժվար է կյանքում ինչ-ինչ իրավիճակներում չխռովվել, անարդարությունների դեմ չընդվզել, հարազատի կորուստն առանց խռովքի ու տրտմության տանել, սակայն աստվածային լույսը, Սուրբ Գրքի ճշմարտություններն ու Քրիստոսի խաղաղությունն իր սրտում ճշմարտապես կրող մարդն այդ ամենի արդյունքում ոչ միայն չի կորցնի իր խաղաղությունը, այլեւ հիշելով մեր փրկության համար Քրիստոսի կրած չարչարանքները, Իրեն անարգողների առջեւ Նրա ցուցաբերած հեզությունն ու խաղաղությունը՝ Տիրոջ օրինակով կկարողանա դիմակայել ամենածանր դժվարություններին եւ փորձություններին, չէ՞ որ գիտի, որ «եթե Իր չարչարանքներին կցորդ ենք, հաղորդակից ենք լինելու եւ փառքին», նաեւ՝ «այս ժամանակի չարչարանքներն արժանի չեն բաղդատվելու գալիք փառքի հետ, որ հայտնվելու է մեզ» (Հռոմ. Ը 17-18): Նա, ով իր ողջ հոգով եւ էությամբ կրողն է Քրիստոսի խաղաղության, կարողանում է նաեւ փոխանցել այն իր հետ շփվող մարդկանց: Այդպիսիներին Տերը երանի տվեց՝ ասելով. «Երանի՛ խաղաղարարներին...»: Խաղաղարարը Քրիստոսի պատկերն ու ներկայությունն է այս աշխարհում: Այդպիսի մարդու հետ շփվելիս եւ հաղորդակցվելիս մարդկանց հոգիները հիրավի խաղաղվում են: Աստվածային խաղաղությունը փոխանցելը մեծագույն շնորհ է, աստվածային առաքինություն: Անշուշտ, ոչ ոք չի կարող փոխանցել խաղաղությունը մեկ ուրիշին, եթե ինքը չունի այն: Ուրեմն նախ հարկ է փնտրել, գտնել եւ պահել այդ խաղաղությունը, որը, ինչպես արդեն ասվեց, Քրիստոսով է տրվում մարդուն: Ս. Պողոս առաքյալն իր թղթերում հորդորում է խաղաղություն հաստատել միմյանց միջեւ, չլինել կռվարար, այլ հեզահամբույր լինել, բոլոր մարդկանց վերաբերվել քաղցրությամբ. «Ինչ չափով հնարավոր է ձեզ համար, բոլոր մարդկանց հետ խաղաղություն պահեցե՛ք...» (Հռոմ. ԺԲ 18): Նաեւ՝ «Արեգակը ձեր բարկության վրա թող մայր չմտնի» (Եփես. Դ 26): Այս կերպ վարվելով՝ ճշմարտապես կլինենք Աստծո որդի եւ Քրիստոսի նման խաղաղարար, ինչպես Խոսրով Անձեւացին է գրում. «Խաղաղություն հաստատենք ե՛ւ մեր անձերում, ե՛ւ Աստծո, ե՛ւ մարդկանց հանդեպ: Քանզի նախ Նա՛ խաղաղություն հաստատեց Իր խաչի արյամբ եւ այժմ մեզնից նույնն է պահանջում: Իսկ ինչպե՞ս է այս լինում. երբ սիրենք միմյանց, երբ տանենք միմյանց բեռները, երբ ընկերոջ կարիքները սեփական անձինը համարենք, երբ լաց լինենք լացողների հետ եւ խնդացողների հետ զվարճանանք, երբ վերացնենք մեր միջից թշնամությունը եւ լինենք Աստծո որդիներ եւ Քրիստոսի նման խաղաղարար»:

Խնդրենք Աստծուն, որ խաղաղեցնի մեր խռոված հոգիները՝ պարգեւելով մեզ Իր փրկարար խաղաղությունը:

*Անժելա ԽԱՉԱՏՐՅԱՆ*

ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ

# ՆԻՆՎԵԱՑԻՆԵՐԻ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Սկիզբը՝ թիվ 12-13*

Երբ թագավորը հանեց իր հանդերձները, բոլորը հետեւեցին նրան: Թագավորը քուրձ առավ եւ հագավ, նրա զորքերն էլ հագան նույնը: Փափկասուն ասորեստանցիները հանկարծակի խափշիկներ դարձան՝ սեւացան քրձով, ինչպես Եսավը, որպեսզի նենգությամբ գողանան Հովնանին: Սատանան Եսավի պես վարվեց: Հակոբը հաղթեց Եսավին. նինվեացիները հաղթեցին Հովնանին:

Թագավորը վերցրեց իր զորքն ու ելավ՝ նայելու քաղաքին: Քարոզեց քաղաքին, որպեսզի բոլորն ապաշխարեն. պիղծն ազատվի իր պղծությունից, որպեսզի չվիրավորվի պատերազմում, ագահը թողնի իր ագահությունը, որպեսզի չթուլանա ճակատամարտում: Ով հեռացել է ընկերոջից, թող հաշտվի նրա հետ, որպեսզի ճշմարիտ Հեռացածը հաշտվի մեզ հետ: Թող ոչ ոք [իր դեմ գործված] հանցանքների համար վրեժ չլուծի, որպեսզի մեր հանցանքներն էլ թողնվեն: Ա՛յս քարոզեցին քարոզողները քաղաքում:



Թագավորը չարչարվում էր, վերակացու լինում իր զորքերին: Կոչեց ու մերձեցրեց աղոթքներին: Երբ նա պատրաստեց ու զինավառեց իր զորքերին, իր քրձերով օրինակ ցույց տվեց եւ ամբողջ քաղաքին խորգով զինապատեց: Որդին էր նա Նեբրովթ հսկայի, որսորդ էր եւ առաքինի. թողեց գազանների որսը եւ ցանկությունը սպանեց, որսի փոխարեն քաղաքը որսաց անապատում, թողեց վայրի կենդանիներին եւ ընտանի անօրենություններն սպանեց: Փոխանակ իր պատիվների ու կառքերի՝ ոտքով շրջեց քաղաքով, որպեսզի ամրացնի ապաշխարության մեջ եւ լվանա նրանցից պղծությունը: Խոնարհությամբ քայլում էր նա եւ հաստատում երերացող քաղաքը:

Տեսավ Հովնանը, ապշեց ու ամաչեց իր ժողովրդի համար: Նինվեում առաքինություն տեսավ եւ լաց եղավ Աբրահամի զավակի համար: Տեսավ, որ հաստատվում է Քանանի զավակը, իսկ Հակոբի զավակը մոլորված էր: Տեսնում էր անթլփատներին, որ սրտով թլփատվեցին, իսկ թլփատվածները խստացան: Նախատեց (մի օրինակում՝ խղճաց - փխդր.) Հովնանը իր ժողովրդին, որ պարծենում էր շաբաթով, տեսավ դարձյալ, որ թլփատվածին մահվան ու կյանքի միջեւ դրեցին:

Նինվեացիների թագավորը հասկացավ, որ [աստվածային] բարկության պատճառը մեղքերն են. անմիջապես կտրեց չարիքի պատճառը: Հավաքվեցին ու խորհուրդ առան նինվեացիները, թե՝ ինչպե՛ս փրկվենք: Ամբողջ քաղաքն ուխտ արեց՝ Աստծուն իր հետ հաշտեցնելու համար: Աստված նինվեացիներին հայտնեց ծածուկ խորհուրդը, թե պահքը կարող է լուծել Իր դատավճիռը: Հովնանը չէր, որ հայտնեց նրանց այս, քանզի նա կասկածում էր նրանց փրկությանը: Երբ նինվեացիները տեսան մարգարեի քարոզության խստությունը, հասկացան, որ Աստված քաղցր է եւ բարերար: Չընդդիմացան մարգարեին, որպեսզի գթած Աստծուն հաշտեցնեն իրենց հետ: Մարգարեին տվեցին հավաստիք, իսկ Աստծուն՝ ողորմության շնորհ: Թեպետեւ Հովնանը կտրում էր [նրանց] հույսը, բայց պահքը մեծացնում էր հույսը. թեպետեւ Հովնանը կոտրում էր [նրանց] սիրտը, բայց աղոթքները հաստատում էին: Քաղաքը պատած ամպն ու խավարը քրձով ու մոխրով էին ցրում: Երկրի սյուները շարժվում էին, եւ խոնարհությունն ամրացնում էր դրանք: Քաղաքը կործանվելու մղվեց, եւ ողորմության տուրքերը հաստատեցին այն: Գոչում էին անասունների երամակները, որոնք ջուր չէին խմում. գոչյուն էին կենդանիների ու մարդկանց տեսակ-տեսակ ձայները: Ճշմարտությունը լսեց նրանց ողբը, եւ ողորմությունը փրկեց նրանց: Նույնն էր բեկումը ծառաների ու իշխանների, նույն խոնարհության հացն էր հարուստներինն ու աղքատներինը, նույն ըմպելին էր թագավորինն ու ռամկինը, վարձու մշակն ու փափկասուն [այրը] նույնպիսի մուգ քրձեր էին հագել, ապաշխարության նույն լծի տակ մտել: Ամբողջ քաղաքն էր երերում իրեն պաշարած հուզմունքից. փշերի վրա նստած ճնճղուկի նման խղճալի էին: Լուսանալիս օրվա բարի ավարտի ակնկալիք չունեին, իսկ երեկոյանալիս չէին կարծում, թե երբեւէ առավոտը կծագի իրենց համար: Ամբողջ ժողովուրդը մահվան բերանին էր եւ բախում էր դժոխքի դռները: Հովնանը հաշվում էր օրերը, նինվեացիները շատացնում էին աղոթքները: Քաղաքը վաստակեց վեց յոթերորդը:

Երբ Հովնանը տեսավ նրանց արտասուքները, խիստ սարսափեց նրանց պահքից: Նրան հովանի էր դդմենին, նինվեացիներին՝ տապախառն տոթը: Տեսավ նրանց անձերը, որ ջրի պես հեղվել էին Բարձրյալի առջեւ: Մանուկներն իրենց մայրերի ծոցում թրջվել էին նրանց արտասուքներից: Տեսավ սգացող Նինվեն ու մոլեգնող Սիոնը, տեսավ նվաստացած Ասորեստանն ու հպարտացած Երուսաղեմը: Վախեցավ Հովնանը. չլինի՞ թե սուտ լինի իր քարոզությունը, քանզի գիտեր, որ իր քարոզությունն ապաշխարությամբ կլուծվի: Տեսավ Հովնանը նինվեացիների թագավորին, որ ճշմարտությամբ երկրպագում էր Աստծուն, տեսավ Ռոբովամին, որ հորթերին էր երկրպագում: Հասավ քաղաքի կործանման օրը, եւ ամբողջ քաղաքում կործանում եղավ:

*Շարունակությունը՝ էջ 8*

Հայր Անատոլի ԲԵՐԵՍՏՈՎ
Բժշկական գիտ. դոկտոր

# ՄԵՂՔ, ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ, ԲԺՇԿՈՒՄ

## Զրույց առաջին

*Սկիզբը՝ թիվ 13*

Հաջորդ օրն արդեն Տիրոջ Մկրտության տոնն էր: Աղջնակի մայրը գնում է եկեղեցի եւ վերադարձին իր հետ մկրտության օրհնված ջրից է բերում բաժանմունք եւ հերթապահ բժշկին ասում. «Բժիշկ, խնդրում եմ այս օրհնված ջրից խմեցրեք աղջկաս ու նաեւ ցողեք մարմինը»: Բժիշկը պատասխանում է մորը. «Ինչպե՞ս կարող եմ նրան ջուր տալ խմելու, երբ կուլ չի տալիս»: «Բժի՛շկ, իսկ դուք նրան զոնդի միջոցով տվեք»,- խնդրում է մայրը: Բժիշկը մտածում է. «Իսկապես, մի՞թե դժվար է այս օրհնված ջրից զոնդի միջոցով տալ երեխային: Դրանից ոչ ինձ, ոչ էլ երեխային այլեւս նոր բան չի պատահի»: Եվ այդ ջրից զոնդով տալիս է երեխային ու ցողում մարմինը:

Եվ որքան մեծ է լինում բոլոր բժիշկների զարմանքը, երբ մոտավորապես մեկ ժամ հետո երեխան գիտակցության է գալիս, իսկ ժամ ու կես հետո սկսում ինքնուրույն շնչել:

Հաջորդ օրը բաժանմունք է գալիս բուժող բժիշկը, որն այդ օրերին գտնվում էր տաճարում, եւ ինչպես աղջկա մայրը, աղոթում էր նրա համար: Մտնում է բժիշկների սենյակն ու հարցնում. «Ի՞նչ ասացին պաթանատոմիայի բաժանմունքում»: «Գնացե՛ք հիվանդասենյակ եւ կտեսնե՛ք»,- լինում է պատասխանը: Սակայն իմ ծանոթ բժիշկը չի հասկանում ինչն ինչոց է: Մտնում է հիվանդասենյակ եւ աչքերին չի հավատում, զարմանքից կանգնած մնում է դռների մեջ. աղջնակը մահճակալում նստած խաղում էր տիկնիկի հետ: Հիվանդանոցում հետո երկար ժամանակ ծիծաղելով ասում էին, թե վերակենդանացման բաժանմունքում բժշկում են օրհնված ջրով: Ծիծաղելը ծիծաղում էին, սակայն ոչ մեկը չէր մտածում, թե ինչպես ինչ տեղի ունեցավ: Ինչու երեխան, որ անպայման պետք է մահանար, հանկարծ առողջացավ, թեպետ բոլոր քիմիական, կենսաքիմիական եւ էլեկտրակենսաբանական ցուցանիշները վկայում էին, որ նա պետք է մահանար:

Երկրորդ դեպքը, որ կրկին նույն բժշկի պրակտիկայից է, բավականին հետաքրքրական է: Մի ժամանակ նա սանիտարական ավիացիայի խորհրդատու բժիշկն էր եւ Ռուսաստանի ու Խորհրդային Միության առողջապահության նախարարությունների կողմից, որպես մանկական նյարդաբան, գործուղվում էր տարբեր քաղաքներ՝ ծանր հիվանդների դեպքերում խորհրդատվության համար: Մի անգամ նա գործուղվում է Սուխումի: Թռիչքից հետո նրան դիմավորում է Սուխումիի հանրապետական հիվանդանոցի գլխավոր բժշկի տեղակալն ու տանում հիվանդանոցի վերակենդանացման բաժանմունք, ուր նա քննում է մեկ տարեկան եւ յոթ ամսական մի մանչուկի: Պարզվում է, որ երեխան ծնողների հետ ապրում է Գագրայում եւ մի ամիս առաջ իրենց տնամերձով հոսող առվի մեջ խեղդվել է: Նաեւ պարզվում է, որ խեղդվելու օրվանից մինչ վերակենդանացման ուղղությամբ բուժօգնություն ցույց տալու պահն անցել էր ոչ պակաս 40-45 րոպե: Դա նշանակում է, որ երեխան 40-45 րոպե գտնվելիս է եղել կոմային մահվան մեջ: Երբ նրան հիվանդանոց են բերում, բժիշկները չեն ցանկանում վերակենդանացման միջոցների դիմել՝ համարելով, որ խեղդվելուց մինչ իրենց մոտ բերելը շատ ժամանակ է անցել, եւ վերականգնման փորձերն անարդյունք են լինելու: Սակայն դժբախտ մայրը ստիպում է, որ անպայման փորձեն: Եվ հրաշք. երեխան սկսում է շնչել, գործում է զարկերակը, սիրտը սկսում աշխատել: Որոշ ժամանակ անց վերակենդանացնող բժշկի ուղեկցությամբ երեխային շտապ օգնության մեքենայով տեղափոխում են Սուխումիի մանկական հանրապետական հիվանդանոցի վերակենդանացման բաժանմունք:

Դրանից մի քանի օր անց երեխայի տատիկը երազում տեսնում է մի բժշկի դեմք ու լսում ձայնը, ով ասում է. «Մոսկվայից խորհրդատու կանչեք» եւ տալիս այդ բժշկի անունը, ազգանունն ու հայրանունը: Մինչ այդ ո՛չ տատիկը եւ ո՛չ էլ հարազատներից որեւէ մեկը լսած անգամ չի եղել նման բժշկի մասին: Երեխայի ծնողները պահանջել էին, որ Աբխազիայի առողջապահության նախարարությունից զանգահարեն ԽՍՀՄ առողջապահության նախարարություն եւ պարզեն, թե նրանք ունե՞ն նման խորհրդատու: Որքան են զարմանում բոլորը, երբ այնտեղից պատասխանում են. «Այո՛, ունենք նման խորհրդատու բժիշկ»: Եվ այդ բժիշկը սանիտարական ինքնաթիռով մեկնեց Սուխումի:



Երեխային նայելուց հետո բժիշկը հայտնաբերում է, որ երեխայի վիճակը խիստ ծանր է, ունի գլխուղեղի չորակեղեւումի սինդրոմ, կամ ավելի պարզ ասած՝ գլխուղեղի կեղեւի ոչնչացում: Երեխան կենդանի էր, ինքնուրույն շնչում էր, սիրտն աշխատում էր բնականոն, ստամոքսն ու երիկամները գործում էին, սակայն գիտակցություն չուներ: Նրա մոտ, ինչպես ընդունված է նեւրաբանության մեջ, «բուսական» վիճակ էր: Կատարում են էլեկտրաէնցեֆալագրամմա (գլխուղեղի կենսադաշտի գրանցում), եւ այն ցույց է տալիս միայն ուղիղ գծեր, ինչը նշանակում է, որ գլխուղեղի կեղեւը ոչնչացել է: Բժիշկը տալիս է եզրակացություն, արտահայտում իր տեսակետը՝ նշելով բուժման անհեռանկարությունը եւ ցանկանում անմիջապես հետ թռչել Մոսկվա, սակայն հետո մտափոխվում է եւ որոշում մեկ-երկու օր հետեւել երեխայի վիճակին: Ուշ երեկոյան երեխայի ծնողները բժշկին տանում են իրենց տուն՝ Գագրա: Երբ մտնում են բակ, տանը կից խոհանոցից նրանց ընդառաջ է ելնում տատիկը՝ սկուտեղով լոբին ձեռքին: Բժշկին տեսնելով՝ նա զարմանք է կտրում, ձեռքերը թուլանում են, եւ լոբով սկուտեղը ձեռքից ընկնում ու կոտրվում է: Պարզվում է, որ նա երազում հենց այդ բժշկին էր տեսել:

Երեխայի ծնողներն ու տատիկը համոզում են բժշկին, որ երեխային իր հետ Մոսկվա՝ բուժման տանի: Թեպետ բժիշկը չէր հավատում, որ հնարավոր է երեխային օգնել, բայց եւ այնպես, հաշվի առնելով իրավիճակի բացառիկությունը, համաձայնվում է: Բերում եւ պառկեցնում է այն մանկական նյարդաբանության բաժանմունքում, ուր ինքն էր աշխատում: Բաժանմունքում կատարում են անհրաժեշտ բոլոր ստուգումները՝ համապատասխան սարքավորումներով ու համակարգչով: Եվ բոլոր տվյալները միանշանակ խոսում են գլխուղեղի անդառնալի վնասվածքի մասին: Սակայն բաժանմունքի բոլոր բժիշկները զարմանք են կտրում, երբ ինտենսիվ (հակագիպոկսիկ եւ խթանիչների միջոցով) բուժումից մեկ շաբաթ անց նրանք հայտնաբերում են ուղեղի թաղանթից եկող ազդակներ, հետո դրանք ցույց է տալիս նաեւ էլեկտրաէնցեֆալագրությունը: Բուժումը խթանող դերակատարություն էր ունեցել: Մի քանի օր հետո էլ երեխան գիտակցության է գալիս: Ի վերջո հիվանդանոցից դուրս է գրվում կենդանի մի մարդ եւ ոչ թե «բուսական» մի արարած:

Այսպիսով՝ ուղղափառ հավատք ունեցող բժշկի միջոցով Աստծո ծրագիրը գործեց այդ մանկան ու իր ընտանիքի կյանքում: Հիվանդանոցից դուրս գրվելուց կարճ ժամանակ անց երեխային մկրտեցին եւ խնդրեցին հենց այս բժշկին՝ դառնալ մանկան կնքահայրը:

*Շարունակելի*

*Թարգմանությունը՝ Ռ. ԱՐՈՅԱՆԻ*

**ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ**

# ՆԻՆՎԵԱՑԻՆԵՐԻ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Սկիզբը՝ էջ 7*

Ոչ մեկի մեջ շունչ չմնաց այդ դառը տեսարանի մեջ: Մանուկներին իրենց առաջ դրեցին, եւ նրանց լացի ձայնը երկինք հասավ: Նրանց երկիրը կարծես նավ լիներ, քանզի հանապազ շարժվում էր նրանց տակ: Լաց եղան իրենց մեռնելու համար, քանզի ոչ ոք չէր լինելու, որ թաղեր եւ մխիթարեր իրենց: Երբ այս հիշեցին, աղաղակեցին. «Ինչպիսի՛ վախճանի հրավիրվեցինք»:

Ելան թագավորն ու նրա կանայք, թագավորի գլխից հանեցին թագը, քանզի լսեցին, թե՝ վաղը չենք լինելու: Ամբողջ քաղաքը միաբերան գոչեց առ Աստված. որովհետեւ քամին փչելիս պղտորվում էր երկրի հողը, որովհետեւ երկինքը փոթորկված էր, ամպն ու մեգը իրար էին խառնվել, եւ զորացել թանձրացել էր մառախուղը: Փայլակը փայլակի էր բախվում, որոտը որոտումի հանդիպում, կայծակները կայծակներին էին ճնշում: Ահուդող ու սրտի հիացում էր այնտեղ: Բոլորը գետնին էին նայում, թե ահա տապալվելու է: Բոլորը լաց էին լինում միմյանց համար, երբ օրերն ավարտվում էին: Հասավ այն ժամը, բոլորը կանգնեցին մահվան աստիճանին, բռնեցին իրարից, որովհետեւ վրա հասավ հուսահատությունը: Լաց լինելով նայում էին երեկոյին, թե՝ գիշերը եկավ եւ մեզ անհեռանալի խավար բերեց, գիշերը եկավ, եւ ահա մենք այլեւս չենք տեսնելու առավոտը: Եվ ասում էին, թե ո՞ր ժամին է կործանվելու՝ երեկոյա՞ն, թե՞ առավոտյան, ո՞ր ժամին պիտի ձայնը գուժի: Կարծում էին, թե երեկոյան է տապալվելու. երեկոն եկավ, եւ այն կանգուն էր: Սպասում էին, որ գիշերը կընկղմվի. գիշեր եղավ, բայց այն տակավին կանգուն էր: Ակնկալում էին, որ առավոտյան կկործանվի. առավոտը բացվեց, Աստծո ողորմության ու գթության դուռը բացվեց քաղաքի վրա, քանզի այն օրերին երկիրը չէր դադարում շարժվելուց: Այս վեց յոթերորդին մեռելները նրանցից երանելի էին. կենդանի մեռել էին եւ թաղված չէին: Եղբայրը հանդիպում էր եղբորը եւ չէր ճանաչում նրա կերպարանքը, եւ ոչ էլ ականջն էր կարողանում ձայնը ձայնից տարբերել: Ծոմապահությունից նմանվել էին խանձված փայտի. մորթն ու ոսկորներն էին միայն մնացել:

Արդ, երբ ծագեցին Աստծո քաղցրությունն ու մարդասիրությունը, քաղաքին ողորմության ավետիս տրվեց: Ամպերն ու մեգը, որ շրջապատել էին քաղաքը, հանկարծակի ցրվեցին ու տարածվեցին, եւ խաղաղություն եղավ: Այնժամ քաղաքի իշխանները հանեցին քուրձը, որ հագել էր թագավորը, եւ հագցրին նրան թագավորական ծիրանիները: Վերցրին վշտակրության թագը եւ նրա գլխին դրեցին արքայության թագը, եւ բոլորը փոխեցին իրենց հագուստները՝ ուրախանալու համար: Իրենց ձեռքերը երկինք բարձրացրին, օրհնեցին, գոհություն հայտնեցին ու փառաբանեցին Աստծուն՝ Նրան, Ով մահվանից փրկեց իրենց:

Թագավորը շտապ դուրս ելավ քաղաքից՝ տեսնելու Հովնանին: Երբ Հովնանը տեսավ թագավորին ու նրա զորքերին ցնծալիս եւ ուրախանալիս, մեծապես տրտմեց եւ գլուխը ցած խոնարհելով՝ չնայեց նրանց: Երբ Հովնանին տրտմած տեսան, հասկացան, որ իրենց փրկության համար է: Եվ թագավորը ողջ բազմության հետ մոտեցավ, խոնարհվեց եւ ասաց. «Ուրախացի՛ր մեզ հետ, եբրայեցի՛, քանզի քո ձեռքով մենք փրկություն գտանք: Ուրախացի՛ր մեզ հետ, Ամաթի՛ որդի, քանզի քո միջոցով մենք ճանաչեցինք Աստծուն»: Տեսնելով, որ տրտմած է, ասացին. «Դու ի՞նչ շահ կունենայիր, եբրայեցի՛, եթե մենք բոլորս մեռնեինք, կամ քեզ ի՞նչ վնաս եղավ, որ շահեցիր մեր քաղաքը: Ինչո՞ւ ես տրտմել, եբրայեցի՛, որ փրկեցիր մեզ, կամ ինչո՞ւ ես սգում, առաքինի՛, որ ապաշխարողներին առաքինի դարձրիր: Արժան է, որ դու ուրախ լինես այսօր, քանզի Աստված ուրախացավ երկնքում: Այսօր ուրա՛խ եղիր, քանզի ամենայն մարդ քո Աստծուն է երկրպագում: Ո՛վ եբրայեցի, նայի՛ր անմեղներին, որ փրկվեցին, եւ դի՛ր քո ձեռքը դրանց վրա: Օրհնի՛ր այս երկիրը, որ փրկվեց, եւ սրա մեջ թող մեծանա քո հիշատակը: Օրհնի՛ր, Հովնա՛ն, մեր քաղաքը, քանզի այսուհետեւ քո անունն է տրվելու սրա մեջ: Բարկության այս օրերին միասին պահեցինք մենք եւ դու. լուծի՛ր քո պահքը, հեռացրո՛ւ քո սուգը եւ ուրախացի՛ր մեզ հետ, եբրայեցո՛ւ որդի, քանզի քաղաքն ու թագավորը երկրպագում են քեզ»: Այս եւ սրանից ավելին խոսեցին նրա հետ:

Սուրբ Հոգին իջավ նրա բերանը. նրանց սկսեցին լսել, որ հարցնում ու ինքն իր հետ քննում է: Վիճում է Նրա հետ Նրա բերանով, երկու դեմքով խոսում Նրա հետ՝ Աստծո եւ մարգարեի, եւ ամբողջ ժողովուրդը լսում էր: Աստված ասում էր քաղաքի մասին, թե՝ «Դո՛ւ, Հովնա՛ն, տրտմեցիր տկար դդմենու համար: Այդ դդմենուն, որ չորացավ, թող նմանվի այս կենդանացած քաղաքը: Թող դդմենին քեզ ուսուցիչ լինի, եւ նրանից սովորի՛ր իմաստության հանճարը: Անարգ դդմենուց փորձի՛ր եւ ճաշակի՛ր, թե ինչ համ ունի Աստծո գթությունը: Թող քո տաղավարը քեզ հայելի լինի. դու երկրի վրա տաղավար էիր հաստատում եւ երկրից քաղա՞ք ես կործանում: Պահում ես անարգ դդմենին եւ տապալո՞ւմ ես մեծ քաղաքը: Որտե՞ղ է քո արդարությունը, Հովնա՛ն, որ քաղաքը դդմենուն չհավասարեցրիր: Տաղավարի հանդեպ ողորմած ես, Հովնա՛ն, իսկ քաղաքի հանդեպ՝ խի՞ստ: Դդմենու տերեւն առավե՞լ ես հարգում, քան այս խոսուն մարդկանց: Դդմենու ոստն ու ծաղիկն առավե՞լ ես պատվում, քան անմեղ մանուկներին»:

*Շարունակելի*

***Գրաբարից փոխադրեց***
***Մարթա ԱՐԱԲՅԱՆԸ***





# ՍՈՒՐԲ ԲԱՌԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ

*Սկիզբը՝ էջ 6*

Սրբավայրը նվիրված է սուրբ Հովհան Օձնեցուն, եւ սուրբ Հովհաննես կապակցությանը համապատասխանում են *Սրքանես* եւ *Սըռվանես* բարբառային ձեւերը: Մալաթիայում հիշատակվում է մի սրբավայր՝ *Չըփթօրօսա վանք* անվանումով: Միանշանակ կերպով չի կարելի ասել, թե «Սուրփ Թօրօսի» այս վանքը Թորոս կամ Թեոդորոս անունով որ սրբին է նվիրված եղել: Գուցե վանքում եղել են մանրանկարներ, եւ սրբավայրը նվիրվել է Թորոս Ռոսլինին: Չի բացառվում նաեւ Թեոդորոս Ռշտունուն, Թեոդորոս Բ Կիլիկեցուն կամ Թեոդորոս Քռթենավորին նվիրված լինելը: Նշվածներից ոչ մեկը մալաթիացի չէ, այլապես կոնկրետացնելը հեշտ կլիներ:

Արծկեի Կոճերեր գյուղում կար մի սրբավայր *Նա՞վկէ* անունով: Կոճերերցիները միմյանց ասում էին. *«Էթա՞նք Նա՞վկէն, ալուճ պէրենք»*: Ակնհայտ է, որ սրբավայրը նվիրված է եղել սուրբ Ստեփանոս Նախավկային, եւ սրբավայրի անունը, Վասպուրականի տարածքում հնչյունափոխվելով, դարձել է *Նա՞վկէ*: Բուլանըխում էլ հիշատակվում է *Սըբ Քանչելագործ* ուխտատեղին, որը նվիրված էր Հույն եկեղեցու նշանավոր հայրերից սուրբ Գրիգոր Սքանչելագործին:

Ժողովրդական խոսքում կիրառվում են «սուրբ» բառով բաղադրված դարձվածային արտահայտություններ, ինչպես՝ *սուրբ-սուրբ անել* (Երեւան, Ղարաբաղ) «հարգել, պաշտել, շատ սիրել» (Նրան սուրբ-սուրբ է անում): Այս արտահայտությունն ասվում է նաեւ իրերի, առարկաների համար: *Սուրբի դուռ դառնալ* (Ախալքալաք) «այցելուները շատ լինել»: (Խանութս սուրբի դուռ դարձավ, հաճախորդ շատ ունիմ): *Սրբած թուր* (Արարատյան) «անվեհեր, աներկյուղ», *սրբած թրից երես չթեքել* (Արարատյան) անվեհեր, քաջասիրտ լինել:

Հետաքրքիր բարբառային հարադրություններ են հանդիպում բուսանուններում եւ թռչունների անվանումներում: Օրինակ՝ *սուրպ Կարաբեդա ծաղիգ* (Մուշ) «անթառամ ծաղիկ», *սուրպ Գեւորքու խոտ* (բսք.) «կատվախոտ, կատվի դեղ, կատվակծկուծ», *սուրբ Գրիքորի խոտ* «խնկածաղիկ, մարեմխոտ», *սուրբ Գրիքորի ծառ* «կասի, սալիխա», *սուրբ Հակոփա ղուշ* (Արարատյան, Ալաշկերտ, Նոր Նախիջեւան) եւ այլն:

Բարբառներում «սուրբ» բառով որոշ կազմություններ փոխաբերաբար արտահայտում են բացասական իմաստ, ինչպես՝ օրինակ՝ *սուրփ սրփոց* (Պոլիս) ծաղրական իմաստով նշանակում է «ամբարիշտ մարդ», *սուրփ սխտոր* (Պոլիս) «բարի դեմքով խաբեբա, խաչագող»:



Գործ՝ Ն. Քոթանջյանի

«Սուրբ» բառով եւ «ուհի» վերջածանցով կազմվում է իգական անձնանուն, որի բարբառային տարբերակներից են՝ *Սըրբ՛ուհի* (Դամիա, Էվջիլար, Խուռնավուլ), *Սըրբ՛ույի* (Հառեն, Արջրա), *Սըռպուն* (Քուչակ), *Սըռպույի* (Լիճք), *Սըրբուն* (Արծկե, Ծայծակ, Կազի, Բոգդանովկա), *Սըրբուի* (Ճիրակամուտ), *Սըրբիկ* (Թեղուտ), *Սըրփօ* (Կարկառ, Ծոկու, Ջորաղբյուր, Սեյրավար, Այնթափ, Ուլյա, Քանաքեռ, Առաջաձոր, Խավենց, Մամռտանց, Զենիս, Գետազատ, Սինագան), *Սըրփօհի* (Մեծոփ, Ագնաբերդ), *Սըրփուն* (Օշական, Բալխո, Բեժանո, Ալաստան, Քըխսամ, Հազարեն, Հուռթուկ, Ջուջան), *Սըռպօ* (Հալնձի), *Սըռփուն* (Արծափ), *Սըրփու* (Արճեշ), *Սըրփուհի* (Խանաբադ, Պարտիզակ), *Սըրփուհ*, (Լղարակ), *Սըրփուգ* (Փուռնօս-Ուլնիա), *Սըրփուկ* (Զարա), *Սըրփուր* (Ազնավուլ), *Սըրփուխ* (Լեսկ, Զառ, Արճակ), *Սըրպուհի* (Քոփ, Ճանիկ), *Սըրպույի* (Սասուն), *Սըրպուի* (Գոպալ, Ասլանբեկ), *Սըրպուն* (Գյումրի, Գոմաձոր, Սիփան, Իրցանք, Փոգա, Չոլախլու, Հադգոն, Մըշկեղ, Ազնա, Կաղզվան, Չըլկանի, Մեծավան, Ախպի), *Սըրպուֆ* (Քեսաբ), *Սըրպու* (Իրիցու գյուղ), *Սըրպուգ* (Օրդու), *Սըրպուգ(ը)* (Չմշկածագ), *Սըրպուխ* (Դերըկ), *Սըրպիգ* (Չիբլուխու), *Սըրփույի* (Սուրմալու), *Սըրփուֆ* (Ապարանց), *Սու՞րփու՞հու՞* (Ազա), *Սըրփուշ* (Ենգիջա), *Սըրպո* (Ալյուր), *Սըրպօ* (Մանազկերտ), *Սուրփի*, (Ներքին եւ Վերին Խոտանան), *Սուրփիկ* (Հին Թաղլար, Տոլորս), *Սուրփիգ* (Եդեսիա), *Սուրփիգ*[!] (Ասկերան), *Սուփուն* (Լոմատուրցխ), *Սուրփուգ* (Ռոդոսթո), *Սուրփուշ* (Տանակերտ), *Սուրփուհի* (Հավարիկ, Խնձորեսկ, Հին Ջուղա, Ղասմաշեն, Քեյվան), *Սուրպէգ*, (Գարմունջ), *Սուրփըուհի* (Ճուռուտ), *Սըռփուհի*, (Եղվարդ, Աղավնաձոր, Բուրաստան), *Չըրբույի* (Ադաբազար), *Չըրպուկ* (Խասկալ) եւ այլն:

Ինչպես ցույց են տալիս օրինակները, Աստվածամորը նվիրված *Սրբուհի* պատվանունը սիրված եւ ընդունված անձնանուն է եղել Հայկական լեռնաշխարհի բոլոր բնակավայրերում:

***Հայկանուշ ՄԵՍՐՈՊՅԱՆ***
***Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ***

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**

**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

**Հեռախոս՝ 517197**

**Էլ.փոստ՝**
**qh@etchmiadzin.am**

Ստոր. տպագր.
3. 08. 2009 թ.

**Տպաքանակը՝ 2100**

**Գինը՝ 50 դրամ**